Շրջակա Միջավայրի Համակողմանի Գնահատման Զեկույց և Շինարարական Պրակտիկայի Կանոնագիրք

Ծրագրի համար. 57088-001
2023 թվականի սեպտեմբեր

Հայաստան. Կլիմային ադապտացվող սննդի անվտանգության ընդլայնման ծրագիր

Պատրաստվել է բնապահպանության ոլորտի մասնագետ/ազգային խորհրդատուի կողմից Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության համար:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐԺՈՒՅԹԸ

(2023 թվականի սեպտեմբերի 16-ի դրությամբ)

Արժույթի միավոր	–	Դրամ (Հայկական դրամ)
1 դրամ	=	0.0026 դոլար
1.00 դոլար	=	385,90 դրամ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	-	Ասիական զարգացման բանկ
ԱԵՏՏ	-	Ազդեցության ենթակա տնային տնտեսություններ
ԱԵԱ	-	Ազդեցության ենթակա անձ
ՇՊԿ	-	Շինարարական պրակտիկայի կանոնագիրք
ՀԳԶ	-	Համակողմանի գնահատման զեկույց
ԿՄԱԻՄ	-	Կատարող և իրականացնող մարմին
ՇՄԱԳ	-	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ԲՎԽ	-	Բողոքների վերանայման խումբ
ԲԲՄ	-	Բողոքների բավարարման մեխանիզմ
ԻՄ	-	Իրականացնող մարմին
ՇՄՆՈԻ	-	Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրություն
ԷՆ	-	Էկոնոմիկայի նախարարություն
ՀՀ	-	Հայաստանի Հանրապետություն
ԱԲԳ	-	Արագ բնապահպանական գնահատում
ԱՄՔՓ	-	Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթուղթ
ԱՖՎ		Արեւային ֆոտովոլտային
JFPR	-	Բարգավաճ և դիմակայուն Ասիայի և Խաղաղ օվկիանոսի Ճապոնիայի հիմնադրամ
ԾԻԽ	-	Ծրագրի իրականացման խումբ
ԱՊՄ	-	Անհատական պաշտպանական միջոցներ
ԱՄՆ դոլար		Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլար

ԿՇՌՄԱՆ ԵՎ ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ

կմ (կիլոմետր) — 1000 մետր
մ (մետր) — 0.001 կիլոմետր

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 4
Ա. Ներածություն 4
Բ. Ծրագրի միջանկյալ արդյունքներ 5
Գ. Զեկույցի շրջանակը և նպատակները 6
Դ. Ենթածրագրերի վայրը 6
II. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ 7
Ա. Հայաստանի օրենսդրական և քաղաքականության շրջանակը 7
Բ. ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի (ԱՄՔՓ, 2009) պահանջը 9
III. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11
Ա. Փոքրամասշտաբ արևային ֆոտովոլտային (ՖՎ) հզորություն ունեցող արևային կայանների տեղադրման ենթածրագրի ակնկալվող բնապահպանական ազդեցությունները և ռիսկերը 12
Բ. Փոքրամասշտաբ արևային ՖՎ հզորություն ունեցող արևային կայանների տեղադրման ենթածրագրի մեղմող միջոցառումները 15
Գ. Գյուղատնտեսական ենթածրագրից ակնկալվող բնապահպանական ազդեցությունները և ռիսկերը 17
Դ. Գյուղատնտեսական ենթածրագրի մեղմման միջոցառումները 23
Ե. Փոքր մասշտաբի արևային ՖՎ հզորությամբ արևային կայանների տեղադրմանը և գյուղատնտեսությանը վերաբերող ապագա ենթածրագրերի ընտրություն 24
IV. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ 25
V. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ 27
VI. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԴԵՐԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 29
VII. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 30
VIII. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 30
Ա. Եզրակացություններ 30
Բ. Առաջարկություններ 31
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՐԱԳ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ԲԱԳ) ՍՏՈՒԳԱԹԵՐԹԵՐ 32
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ 38
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆՏՐՎԱԾ ՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ 39
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱԿԵՐԸ 41
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ 42

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

I. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա. Ներածություն

1. Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) Հայաստանում իրականացնում է դրամաշնորհային աջակցության ծրագիր՝ Բարգավաճ և դիմակայուն Ասիայի և Խաղաղ օվկիանոսի Ճապոնիայի հիմնադրամից (JFPR) առաջարկվող ֆինանսավորմամբ: Այս ծրագիրը նախաձեռնվել է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) դիմակայունության միջամտության կարիքների վերաբերյալ ԱԶԲ-ի և Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) խորհրդակցությունների միջոցով: Ծրագիրը որպես լծակ օգտագործում է Պարենային անվտանգության մասով JFPR-ը՝ առանձին դրամաշնորհային ֆինանսավորմանն աջակցելու նպատակով:

2. Սա Հայաստանի համար առաջարկվող առանձին դրամաշնորհային ծրագիր է: Այն կուղղվի i) կլիմայի փոփոխության և աղետների ռիսկի կառավարմանը և ii) աղքատության կրճատմանը: Կատարող և իրականացնող մարմին (ԿՄ և ԻՄ) է հանդիսանում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (ԷՆ): Ծրագրին առնչվող գործողությունները իրագործելու նպատակով պայմանագրեր կկնքվեն մասնավոր կազմակերպությունների և ազգային հասարակական կազմակերպությունների հետ:

3. Ծրագիրը կցուցաբերի ներառական մասնակցային մոտեցում՝ վերականգնվող էներգետիկ լուծումների ներդրման, հարմարվողականության միջոցառումները և կլիմայադիմակայուն գյուղատնտեսությունը և գյուղացիական տնտեսությունների տարածքներում ոռոգումը ֆինանսավորելու հարցում տեղական իշխանությունների հարմարվողական կարողությունների ավելացման ուղղությամբ, ներգրավելով և՛ կառավարության, և՛ համայնքների շահակիրներին: Ծրագիրը կաջակցի գյուղատնտեսությունում կլիմայադիմակայուն ներդրումների վերհանման, նախագծման և իրականացման գործում ԷՆ-ի կարողությունների ընդլայնմանը:

4. Ծրագրի նպատակն է բարելավել պարենային անվտանգությունը, ավելացնել գյուղատնտեսության ոլորտի կենսապահովման միջոցները, բարելավել խիստ խոցելի համայնքների եկամտաստեղծ գործունեությունը և հարմարվողական կարողությունները, ինչպես նաև՝ բարձրացնել կլիմայի ուղղվածությամբ գյուղատնտեսական ներդրումների աստիճանական ավելացման մասով ինստիտուցիոնալ կարողությունները: Սա պետք է արվի ԷՆ-ի հետ համագործակցությամբ: Շիրակի և Տավուշի մարզերն ընտրվել են որպես ծրագրի՝ կլիմայադիմակայուն և վերականգնվող էներգետիկ լուծումներում ներդրումների կատարման տեղամասներ: Այս երկու մարզերն ունեն 35% և 38% աղքատության բարձր մակարդակ, պարենային անապահովություն և կլիմայական ռիսկ: Դրանցում արձանագրվել է մեկ շնչի հաշվով ամենացածր Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), և կլիմայի փոփոխության ազդեցությամբ պայմանավորված՝ ջրհեղեղների, երաշտի և եղանակային ծայրահեղ իրադարձությունների ռիսկի ավելացում: Ծրագիրը նպաստում է 2020-2030 թվականների համար գյուղատնտեսության զարգացման ապահովման և գյուղատնտեսության ոլորտի կլիմայական հարմարվողականության բարելավման հարցում Կառավարության ընդհանուր ուղղվածությանը:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

Բ. Ծրագրի միջանկյալ արդյունքներ

Միջանկյալ արդյունք 1. Կլիմայադիմակայուն էներգետիկ լուծումները ստեղծվել են և հաջորդիվ՝ գործարկվել.

Այս գործողությամբ կմշակվեն վերականգնվող էներգետիկ լուծումներ Շիրակի և Տավուշի մարզերի առնվազն 10 խոցելի համայնքների համար: Չվերականգնվող էներգիայից՝ վերականգնվող էներգիային անցնելու արդյունքում կատարված ծախսային խնայողությունները կդյուրացնեն երկու մարզերի տեղական կառավարման մարմինների կողմից կլիմայադիմակայուն գյուղատնտեսական գործելակերպերի, կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների յուրացումը: Այս միջանկյալ արդյունքը ներառում է.

(i) փոքրամասշտաբ արևային ֆոտովոլտային (ՖՎ) հզորությամբ արևային կայանների տեղադրում՝ ցանցից կախվածությունը և կլիմայադիմակայուն ակտիվներում ու կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումներում ներդրվող ծախսային խնայողությունները նվազեցնելու նպատակով:

(ii) ընտրված համայնքներում շրջանառու միջոցների ստեղծում, ոչ վերականգնվող էներգիայից՝ վերականգնվողին անցման արդյունքում ստացված խնայողությունները կուտակելու համար:

(iii) առաջնահերթ ներդրումների ցանկի մշակում՝ հիմք ընդունելով համայնքային կարիքները, տեղական իշխանությունների և ԷՆ-ի առաջնահերթությունները: Դրանք կաջակցեն կլիմայական փոփոխության՝ գենդերային առումով արձագանքող հարմարվողականությանն ու պարենային անվտանգությանը, և կֆինանսավորվեն շրջանառու միջոցներով:

Միջանկյալ արդյունք 2. Մնդի անվտանգության բարձրացման համար կլիմայապես խելացի տեխնոլոգիաները ներդրվել են.

Այս գործողությունը կներառի տեղական մակարդակում կլիմայապես խելացի գյուղատնտեսությունը՝ համայնքների ներգրավվածության և պլանավորման միջոցով: Միջանկյալ արդյունքը ներառում է.

(i) շահառու տնային տնտեսությունների ընտրություն՝ գենդերային առումով արձագանքող կլիմայապես խելացի միջամտությունների համար, գյուղատնտեսությանը և եկամտաստեղծ կենսապահովման ենթածրագրերին աջակցելու նպատակով,

(ii) կլիմայապես խելացի գյուղատնտեսական սարքավորումների և փոքրածավալ արժեշղթայի միջոցների մատակարարման և տեղադրման դրամաշնորհային ֆինանսավորում՝ նախատեսված ընտրված տնային տնտեսությունների, այդ թվում՝ կանանց համար,

(iii) ընտրված տնային տնտեսությունների վերապատրաստումներ և կարողությունների զարգացում՝ կլիմայապես խելացի գյուղատնտեսությանը, բիզնես պլանավորմանը և ֆինանսական կառավարմանն աջակցելու նպատակով:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

Միջանկյալ արդյունք 3. Էկոնոմիկայի նախարարության՝ կլիմայապես խելացի գյուղատնտեսական պլանավորման կարողությունները մեծացել է.

Այս բաղադրիչը կհասցեագրի ԷՆ-ի ներքին կարողությունները և գիտելիքների բացերը՝ կլիմայադիմակայունության աջակցությանն ուղղված ներդրումներն աստիճանաբար մեծացնելու նպատակով: Ծրագիրը կօգտվի TA-662928-ի հետ սիներգիայից, որի նպատակն է աստիճանաբար մեծացնել հարմարվողականությունը ներդրումային պլանավորման և բանկային ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացման միջոցով: Կարողությունների զարգացումը խարսխված կլինի ոլորտի կարիքների և կլիմայի փոփոխության հարմարվողականության մասով ներդրումների պլանավորման բարելավման պահանջների վրա: Միջանկյալ արդյունքը կներառի գյուղատնտեսության ոլորտի ներդրումներում կլիմայի հարմարվողականության ընդգրկումը:

Գ. Զեկույցի շրջանակը և նպատակները

5. Սույն Համակողմանի գնահատման զեկույցը (ՀԳԶ) պատրաստվել է հետևյալն ի ցույց դնելու նպատակով.

(i) Նկարագրել շրջակա միջավայրի համակողմանի գնահատման վարժանքի բացահայտումները՝ ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի պահանջների նկատմամբ (ԱՄՔՓ 2009 թվական) Շինարարական պրակտիկայի կանոնագրքի (ՇՊԿ) տեսանկյունից ժամանակավոր ազդեցությունները ցույց տալու նպատակով:

(ii) Ցույց տալ ԿՄ/ԻՄ-ի կողմից ձեռնարկվելիք մեղմման միջոցառումները՝ ապահովելու, որպեսզի Ծրագրի իրականացման ընթացքում մեղմվեն բոլոր տեսակի հնարավոր ազդեցությունները, եթե այդպիսիք լինեն:

6. Համակողմանի գնահատումը հատկապես կարևորել է հետևյալի հաստատումը.

(i) Արդյո՞ք ծրագիրն ունի ազդեցություն շրջակա միջավայրի վրա,

(ii) Շրջակա միջավայրի վրա ազդեցության հնարավոր ռիսկերի գնահատում,

(iii) Առաջարկել պաշտպանական միջոցներ Ծրագրի իրականացման ընթացքում նման ազդեցությունից խուսափելու համար՝ որպես ԱԶԲ ԱՄՔՓ-ի (2009 թվական) հիմնական նպատակ և սկզբունք,

(iv) Ֆիլտրող ստուգաթերթ,

(v) Շինարարական պրակտիկայի կանոնագիրք /ՇՊԿ/:

Դ. Ենթածրագրերի վայրը

7. Ծրագրի ազդեցությունը կրող համայնքներն են Բաղանիսը և Զույգաղբյուրը: Վերջիններս գյուղական բնակավայրեր են, որոնք գտնվում են համապատասխանաբար Տավուշի և Շիրակի մարզերում: Բաղանիսը գտնվում է երկրի հյուսիս-արևելյան մասում՝ Ադրբեջանի հետ սահմանի հարևանությամբ: Սրան հակառակ, Զույգաղբյուրը գտնվում է հյուսիս-արևմտյան շրջանում՝ Վրաստանի սահմանից մոտավորապես 17 կիլոմետր հեռավորության վրա: Ազդեցության ենթակա համայնքների տեղադիրքերը ներկայացված են Հավելված 2-ում:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

II. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Ա. Հայաստանի օրենսդրական և քաղաքականության շրջանակը

8. *Օրենսգրքեր և օրենքներ*

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (2014 թվականի հուլիսի 22) պահանջվում է ծրագրերի գնահատում՝ շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցությունների մասով, սքրինինգ/ֆիլտրում և դասակարգում՝ ըստ գործունեության տեսակի, գնահատման հաշվետվությունների փորձաքննություն և փորձաքննության եզրակացության տրամադրում:
- «Թափոնների մասին» օրենքը (2004 թվական) կարգավորում է թափոնների, այդ թվում՝ շինարարությանն առնչվող թափոնների հավաքումը, փոխադրումը, պահումը, մշակումը, օգտահանումը և հեռացումը:
- «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքը (2005 թվական) կարգավորում է ՀՀ բնապահպանական օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպումը և իրականացումը:
- «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքը (2000 թվական) կարգավորում է տնտեսական գործունեության նկատմամբ ստուգումների իրականացման ընթացակարգերը:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքը (1994 թվական, վերջին անգամ լրամշակվել է 2007 թվականին) կարգավորում է արտանետման թույլտվությունները և նախատեսում մթնոլորտային օդի աղտոտման առավելագույն թույլատրելի ծանրաբեռնվածությունը/կոնցենտրացիան:
- Ջրային օրենսգիրքը (2002 թվական) նախատեսում է իրավական հիմք երկրի ջրային ռեսուրսների պահպանության, և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման համար, ինչպես նաև՝ ապագա սերունդների համար դրանց պաշտպանության երաշխավորումը: Ջրային օրենսգրքի (2002 թվական) հետևյալ կարգավորումներն ու ընթացակարգերն են վերաբերելի. (ա) ջրօգտագործման թույլտվության ընթացակարգեր, (բ) բնապահպանական հոսքեր, (գ) ջրահեռացում, (է) ստորգետնյա ջրային աղբյուրների պահպանում և (թ) հասարակության իրազեկություն և ՋՌԿԳ-ի կողմից մշակված այն փաստաթղթերի և այլ նորմատիվ փաստաթղթերի հրապարակայնություն, որոնք տրամադրում են ջրի և բնապահպանական խնդիրների հետ ուղղակիորեն կապված ուղեցույցներ:
- Բնապահպանական վերահսկողության մասին օրենք (ՀՕ-82-Ն), (2022 թվական):
- Հողային օրենսգիրքը (2001 թվական) կարգավորում է հողօգտագործման գործընթացում առաջացող բոլոր հարաբերությունները, որոնք իրավական հիմք են ստեղծում հողօգտագործման տարբեր և արդյունավետ ձևերի մշակման, հողի բերրիության բարելավման և պահպանման, և հողային ռեսուրսների պաշտպանության համար՝ հաշվի առնելով դրանց ընդգծված բնապահպանական, տնտեսական և սոցիալական նշանակությունը:
- «Բուսական աշխարհի մասին» օրենքը (1999 թվական) և «Կենդանական աշխարհի մասին» օրենքը (2000 թվական) ընդհանուր գծերով նկարագրում են բույսերի և կենդանիների բնական պոպուլյացիաների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև՝ կենսաբազմազանության վրա մարդու գործունեության ազդեցության կարգավորման

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

ազգային քաղաքականությունները: Օրենքները նախատեսում են տեսակների, հատկապես՝ հազվագյուտ և անհետացող տեսակների գնահատում և մոնիթորինգ:

- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքը (11.11.1998 թվական):

9. *Այլ իրավական ակտեր*

- ՀՀ կառավարության թիվ 1325-Ն որոշումը «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» (19.11.2014 թվական):
- ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 121-Ն որոշումը նախատեսում է Հայաստանում, այդ թվում՝ քաղաքաշինության ոլորտում առաջացող վտանգավոր թափոնների հետ վարվելու լիցենզավորման ընթացակարգերի մասով կարգավորումները (30.01.2003 թվական):
- ՀՀ կառավարության թիվ 1396-Ն որոշումը «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» (8.09.2011 թվական):
- ՀՀ կառավարության թիվ N1404-Ն որոշումը «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» (02.11.2017 թվական):
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002 թվականի թիվ 138 հրամանով ընդունված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» 2-III-11.3 սանիտարական նորմերը:
- ԳՈՍՏ 17.2.4.05-83. «Շրջակա միջավայրի պաշտպանություն. Մթնոլորտ. Փոշու մասնիկների որոշման գրավիմետրիկ մեթոդ»:
- ՀՀ կառավարության թիվ 160- Ն որոշումը «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին (02.02.2006 թվական):
- ՀՀ կառավարության թիվ 75-Ն որոշումը «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» (27.01.2011 թվական):
- ՀՀ կառավարության թիվ 438 որոշումը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման» կարգի վերաբերյալ (20.04.2002 թվական):
- ՀՀ կառավարության թիվ 108-Ն որոշումը «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» (08.02.2018 թվական):
- ՀՀ կառավարության թիվ 967-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» (14.08.2008 թվական):

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱՁԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱՁԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի թիվ 64-Լ հրամանը «Անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի համակարգչային ծրագրերը սահմանելու մասին» (18.02.2020 թվական):

10. *Աշխատանքային առողջության և անվտանգության կանոնների և օրենքների մասով.*

- «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-237-Ն),
- «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքը (2005 թվական),
- «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (1998 թվական):

11. *Այլ իրավական ակտեր*

- ՀՀ կառավարության թիվ 1631-Ն որոշումը անհատական պաշտպանական միջոցների վերաբերյալ (2004 թվական):
- ՀՀ կառավարության թիվ 1089-Ն որոշումը բժշկական զննության վերաբերյալ (2004 թվական):
- ՀՀ կառավարության թիվ 2390-Ն որոշումը «Մեքենաների և մեխանիզմների անվտանգությանը ներկայացվող պահանջների վերաբերյալ (2006 թվական):
- ՀՀ առողջապահության նախարարի թիվ 15-Ն հրամանը «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին (19.09.2012 թվական):

Բ. ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի (ԱՄՔՓ, 2009) պահանջը

12. ԱՄՔՓ 2009-ը կազմված է շրջակա միջավայրի, բնիկ ժողովուրդների և հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ երեք գործառնական քաղաքականություններից: Այս քաղաքականությունը տրամադրում է բնապահպանական և սոցիալական անբարենպաստ ազդեցություններից խուսափելու, դրանք նվազագույնի հասցնելու կամ մեղմելու շրջանակները, գործարկիչները և սկզբունքները, այդ թվում՝ պաշտպանելով նրանց իրավունքները, որոնք հավանականորեն կենթարկվեն անբարենպաստ ազդեցության և կմարգինալացվեն զարգացման գործընթացի արդյունքում:

13. ԱՄՔՓ 2009-ի բնապահպանական պահանջները նպատակ ունեն ապահովել ծրագրի բնապահպանական հաստատունությունն ու կայունությունը, ներառել բնապահպանական նկատառումները ծրագրի որոշումների կայացման գործընթացում: Գլխավոր նպատակն է յուրաքանչյուր առաջարկվող ծրագրի համար իրականացնել շրջակա միջավայրի գնահատում՝ հնարավոր ազդեցությունները բացահայտելու և այնուհետև բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով: Առաջարկվող մեղմման միջոցառումները, մոնիթորինգի և հաշվետվության պահանջները, ինստիտուցիոնալ մեխանիզմները, ժամանակացույցերը, ծախսերի գնահատումները և կատարողականի ցուցանիշները փաստաթղթավորվում են շրջակա միջավայրի գնահատման զեկույցում: ԱԶԲ-ն պահանջում է բոլոր նախագծային վարկերի, ծրագրային վարկերի, ոլորտային վարկերի, ոլորտների զարգացման ծրագրերի վարկերի, ֆինանսական միջնորդության վարկերի և մասնավոր հատվածի ներդրումային

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

գործառնությունների բնապահպանական գնահատում: Բնապահպանական գնահատումն իրենից ներկայացնում է գործընթաց, այլ ոչ՝ մեկանգամյա հաշվետվություն, և ներառում է անհրաժեշտ բնապահպանական վերլուծությունները և շրջակա միջավայրի կառավարման պլանավորումը, որոնք տեղի են ունենում ծրագրի ողջ պարբերաշրջանում:

14. Յուրաքանչյուր ենթածրագիր նախ դասակարգվում է ԱՁԲ-ի բնապահպանական արագ գնահատման (ԲԱԳ) ստուգաթերթերի միջոցով, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել ենթածրագրերի հնարավոր ռիսկը/ազդեցությունները և որոշել բնապահպանական գնահատման համապատասխան չափն ու տեսակը ծրագրի պարբերաշրջանի վաղ փուլում: Համաձայն ԲԱԳ ստուգաթերթի բացահայտումների՝ ծրագիրը դասակարգվելու է որպես Ա, Բ կամ Գ: Բնապահպանական կատեգորիաների սահմանումները և հաշվետվության պահանջները ամփոփված են ստորև:

Աղյուսակ 1. ԱՁԲ-ի բնապահպանական կատեգորիաները

Կատեգորիա	**Ծրագրի ազդեցություն**	**Հաշվետվության պահանջ**
Ա	Առաջարկվող ծրագիրը դասակարգվում է որպես Ա կատեգորիա, եթե հավանական է, որ այն կունենա զգալի անբարենպաստ բնապահպանական ազդեցություններ, որոնք կլինեն անդառնալի, բազմազան կամ աննախադեպ: Այս ազդեցությունները կարող են բացասաբար անդրադառնալ տարածքի վրա, որն ավելի մեծ է, քան ֆիզիկական աշխատանքների ենթակա տեղամասերի կամ օբյեկտների տարածքներն են:	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ)
Բ	Առաջարկվող ծրագիրը դասակարգվում է որպես Բ կատեգորիա, եթե դրա հնարավոր անբարենպաստ բնապահպանական ազդեցություններն ավելի քիչ անբարենպաստ են, քան Ա կատեգորիայի ծրագրերինը: Այս ազդեցությունները հատուկ են տվյալ տեղանքին, դրանցից գրեթե ոչ մեկն անդառնալի չէ, և շատ դեպքերում մեղմման միջոցառումները կարող են նախագծվել ավելի հեշտությամբ, քան Ա կատեգորիայի ծրագրերի համար:	Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրություն (ՇՄՆՈՒ)
Գ	Առաջարկվող ծրագիրը դասակարգվում է որպես Գ կատեգորիա, եթե հավանական է, որ այն կունենա նվազագույն կամ ոչ մի բացասական բնապահպանական ազդեցությունների:	Չի պահանջվում որևէ բնապահպանական գնահատում, թեև բնապահպանական հետևանքները պետք է վերանայվեն

15. Ծրագիրը դասակարգվում է որպես «Գ» նվազագույն ազդեցությունների հաշվառմամբ բնապահպանական երաշխիքների համար:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱՁԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱՁԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

III. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

16. Բաղանիս և Զույգաղբյուր համայնքներում կտեղադրվեն 40 կՎտ հզորությամբ երկու արևային կայաններ: Արևային կայանների տեղադրման համար անհրաժեշտ է 120-ից մինչև 160 քառակուսի մետր մակերեսով տարածք/մակերես: Քանի որ Ծրագիրը կենտրոնանում է համայնքի զարգացման բարելավման և արևային կայանների օգտագործման վրա՝ համայնքի ներսում վարչական օբյեկտներին և կառույցներին էլեկտրաէներգիա մատակարարելու նպատակով, ապա այդ կայանները կտեղակայվեն համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի վրա կամ հողատարածքներում: Այս մոտեցումն ընտրվել է հողի օտարման անհրաժեշտությունը կանխելու համար: Այն դեպքերում, երբ համայնքը չունի արևային կայանների տեղադրման համար պահանջվող տեխնիկական չափանիշները բավարարող համայնքապատկան կառույցներ, ապա արևային կայանները կտեղակայվեն համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքում՝ այնպիսի տեխնիկական լուծումների գործարկումով, որոնք հնարավոր կդարձնեն դրանց ներքո Ագրովոլտային արևային կայանների ստեղծումը: Ավելին, Արևային կայաններից ստացված եկամուտները բացառապես կհատկացվեն համայնքային գյուղատնտեսության զարգացմանն աջակցելու նպատակով: Սա կարող է ներառել այնպիսի նախաձեռնություններ, ինչպիսիք են՝ համայնքի ներսում ոռոգման համակարգերի կառուցումը կամ խելացի այգիների ծրագրի իրականացման խթանումը:

17. Տրամադրված տվյալները վերլուծելուց և դաշտային այցելություններ կատարելուց հետո ակնհայտ է դարձել, որ Բաղանիս համայնքն ունի սեփական հողային ռեսուրսների և տեխնիկական հնարավորությունների հետ կապված սահմանափակումներ, երբ հարցը վերաբերում է իրենց համայնքային շենքերին: Արդյունքում ամենապրակտիկ լուծումը կլինի արեւային կայանների տեղադրումը դպրոցի տանիքին:

18. Զույգաղբյուր համայնքի պարագայում հարկ է նշել, որ համայնքի բոլոր վարչական շենքերի տեխնիկական սահմանափակումները, ներառյալ՝ հին կառուցվածքային սահմանափակումները, տանիքապատման խնդիրները, բյուջետային սահմանափակումները և ասբեստի խնդիրները, միասին վերցրած այդ շենքերը դարձնում են անհարմար դրանց տանիքների վրա արևային կայանների տեղադրման համար: Արդյունքում՝ որոշում է կայացվել արևային կայանները տեղադրել դպրոցի մարզադաշտի մոտ, որը համայնքի սեփականություն հանդիսացող գույք է: ՖՎ-ի տեղադրման վայրերը/շենքերը ներկայացված են Հավելված 4-ում:

19. Արևային կայանների տեղադրմանը զուգահեռ՝ յուրաքանչյուր համայնքից ընտրվում է երկու տնային տնտեսություն՝ իրենց առկա բակերում խելացի այգիներ ստեղծելու նպատակով, պայմանով, որ առկա տարածքի մակերեսը լինի առնվազն 100 քառակուսի մետր (տե՛ս Հավելված 4-ը): Այս ընտրված տնային տնտեսությունները կստանան հիմնական սարքերը, ներառյալ՝ կաթիլային ոռոգման համակարգը (կազմված է ջրի բաքից և խողովակներից), տարբեր հատապտուղների սածիլներ (օրինակ՝ ազնվամորու, ցողամորի և գոջի հատապտուղ և այլն), մրգի չորանոց կամ ջրազրկիչ սարք, ձողեր, հակաթռչնային ցանցեր և այլն: Ավելին, կտրվեն համապարփակ հրահանգներ, կանցկացվեն վերապատրաստման դասընթացներ և կարողությունների զարգացման միջոցառումներ՝ ապահովելու, որպեսզի տնային տնտեսությունները լինեն լավ նախապատրաստված և աջակցություն ստացած՝ իրենց խելացի այգիները հաջողությամբ հիմնելու գործում:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

Ա. Փոքրամասշտաբ արևային ֆոտովոլտային (ՖՎ) հզորություն ունեցող արևային կայանների տեղադրման ենթածրագրի ակնկալվող բնապահպանական ազդեցությունները և ռիսկերը

20. Ծրագիրը նպատակ ունի տեղադրել փոքրամասշտաբ ՖՎ հզորություն ունեցող արևային կայաններ համայնքային շենքերի տանիքների վրա կամ համայնքային հողատարածքներում: Գետնի մակարդակից 2.5 մետր բարձրության վրա գտնվող ագրովոլտային արևային կայանների յուրահատուկ նախագիծը տալիս է դրանց տակ այգեգործությամբ զբաղվելու հնարավորություն: Այս նախագիծը ոչ միայն ապահովում է կարկուտից ծառերի և թփերի պաշտպանություն, այլև ունի գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը բարձրացնելու ներուժ:

21. Թե՛ ագրովոլտային, և թե՛ տանիքի արևային կայանների շինարարության փուլը ներառում է տարբեր գործողություններ, որոնք կարող են ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա: Այս ազդեցությունները կարող են ներառել ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Այստեղ ներկայացվում են որոշ հնարավոր բնապահպանական ազդեցություններ, որոնք ակնկալվում է, որ կլինեն փոքր և տեղակայված սահմանափակ հողատարածքների վրա, և որոնք պետք է հաշվի առնվեն երկու տիպի արևային կայանների կառուցման փուլում և ներառեն Աղյուսակ 2-ում նշված ազդեցությունները:

Աղյուսակ 2. Ակնկալվող բնապահպանական ազդեցություններ

Հնարավոր ազդեցություն	Ռիսկ	Ծանոթագրություն
Շինարարության փուլի ազդեցությունները		
Հողերի խախտում. Ագրովոլտային համակարգերի տեղադրումը կարող է ներառել հողի մաքրում կամ հողի նախապատրաստում ՖՎ տեղադրման համար:	Ցածր	Մատակարարը կապահովի սահմանափակ հողակտորների վրա տեղակայված ճշգրիտ և նպատակային շինարարություն՝ ագրովոլտային համակարգի և հարակից ենթակառուցվածքների հետքը նվազագույնի հասցնելը նպատակով: Նյութերի և սարքավորումների արդյունավետ կառավարում՝ բնադրավայրերի կորուստը և բուսական ու կենդանական աշխարհի համար վտանգը նվազագույնի հասցնելու նպատակով:
Տանիքում անցքերի բացում. Որոշ դեպքերում, տանիքի արևային կայանները կարող են ներառել գայլիկոնում կամ տանիքում անցքերի բացում՝ արևային կայաններն ամրացնելու նպատակով:	Ցածր	Մատակարարից կպահանջի պատշաճ հերմետացում. ջրամեկուսացումն անհրաժեշտ է արտահոսքերը և ջրից պատճառվող վնասը կանխելու համար:
Թափոնների առաջացում	Ցածր	Մատակարարը պատասխանատու կլինի շինարարության և տեղադրման ընթացքում առաջացած թափոնների,

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

		այդ թվում՝ փաթեթավորման, տանիքի հին նյութերի կառավարման համար:
Ջրի օգտագործում	Ցածր	Մատակարարից կպահանջվի շինարարության ընթացքում կառավարել ջրի օգտագործումը՝ ավելորդ սպառումը և արտահոսքը կանխելու նպատակով: Ջուրը կարող է անհրաժեշտ լինել այնպիսի գործողությունների համար, ինչպիսիք են՝ փոշեճնշումը և հողի կարծրացումը. ուստի պատշաճ կառավարումը շատ կարևոր է:
Հողի էրոզիա	Ցածր	Մատակարարը պատասխանատու է լինելու աշխատանքային տարածքի մերկացման հետևանքով առաջացող հողի էրոզիայի և դեգրադացիայի կառավարման համար, իրականացնելով էրոզիայի և նստվածքների վերահսկման միջոցառումներ՝ հողի էրոզիան և արտահոսքը կանխելու նպատակով:
Կուտակված շինանյութեր	Ցածր	Մատակարարի համար կպահանջվի փոքր տարածք սարքավորումների տեղադրման և տրանսպորտային միջոցների մուտքի/ելքի համար: Տեղադրումից անմիջապես հետո նյութերը կհեռացվեն:
Բանվոր-շինարարների կենցաղային կոյուղուց առաջացող կեղտաջրեր:	Շատ ցածր	Մատակարարը կտրամադրի սանհանգույց բանվորների համար: Կամ համայնքի շենքի զուգարանները կարող են օգտագործվել տեղադրման աշխատանքների շատ կարճ ժամանակահատվածի համար:
Շինարարական աշխատանքներից աղմուկի աղտոտվածություն, ինչը կարող է խանգարել սոցիալական օբյեկտներին և/կամ մոտակա համայնքներին:	Շատ ցածր	Արևային կայանների տեղադրման համար կպահանջի տեղադրման շատ կարճ ժամանակահատված: Սա ցածր աղմուկ առաջացնող գործողություն է:
Կոշտ թափոնների առաջացում շինարար-բանվորների կողմից, և շինարարական և էլեկտրոնային թափոններ:	Ցածր	Մատակարարն ամեն օր կհեռացնի բոլոր թափոնները և դրանք կտեղակայի հաստատված տարածքներում:
Աշխատանքային առողջության և անվտանգության ռիսկեր բանվոր-շինարարների համար:	Ցածր	Մատակարարի պայմանագիրը կներառի առողջության և անվտանգության համար պահանջվող միջոցառումները և սարքերը աշխատանքի տվյալ տեսակի մասով վերհանված վտանգի համար (այսինքն՝

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

		էլեկտրական հոսանքի վտանգը): Արևային կայանի տեղադրման ժամանակ էլեկտրաէներգիան կանջատվի:
Համայնքի առողջության և անվտանգության մասով ազդեցություններ:	Անհա-վանա-կան	Արևային վահանակների տեղադրման ժամանակ մատակարարը թույլ չի տա, որպեսզի լիազորություն չունեցող անձնակազմը հայտնվի աշխատանքների իրականացման վայրի մերձակայքում:
Ակնկալվում է, որ ծրագրի իրականացման ընթացքում կառաջանան որոշակի թափոններ, այդ թվում՝ էլեկտրական մալուխների էլեկտրական և լարանցման կտորտանք-թափոնները, մալուխի դատարկ կոճերը, և ոլորակները, վնասված կամ չօգտագործված էլեկտրական բաղադրիչները, փաթեթավորման նյութերը - արևային վահանակների, հակադարձիչների/ինվերտորների և այլ սարքերի ստվարաթղթե փաթեթավորումը, փաթաթման և փաթեթավորման պլաստիկ նյութերը, ընդհանուր շինարարական թափոնները - դատարկ տարաներ (օրինակ՝ ջրի շշեր, սննդի փաթեթավորում):	Ցածր	Մատակարարը պատասխանատու է լինելու ծրագրի իրականացման ընթացքում թափոնների կառավարման համար: Մատակարարներից կպահանջվի ԾԻԽ-ի և տեղական կառավարման մարմինների հետ համակարգել թափոնների պահման և հեռացման տարածքների հարցը:
Աշխատուժ	Ցածր	Մատակարարից կպահանջվի ապահովել աշխատողների, և հատկապես մինչև 16 տարեկանների զբաղվածությանը վերաբերող ՀՀ աշխատանքային օրենսդրության և կանոնակարգերի խստիվ կատարումը: Սա ներառում է նվազագույն տարիքային պահանջների, աշխատանքային ժամերի և անվտանգության կանոնների պահպանումը:
Հնարավոր ազդեցությունները գործարկման փուլում		
Մաքուր էներգիայի արտադրություն	Ավելի բարձր	Ագրովոլտային կամ տանիքի արևային կայանները արտադրում են վերականգնվող էներգիա, նվազեցնելով հանածո վառելիքի անհրաժեշտությունը և մեղմելով ջերմոցային գազերի

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

		արտանետումները: Սա նպաստում է կլիմայի փոփոխության մեղմմանը և օդի աղտոտվածության նվազեցմանը:
Օդի որակի բարելավում	Ավելի բարձր	Ագրովոլտային կամ տանիքի արևային կայաններից էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկը նվազեցնելը կարող է նպաստել տեղերում օդի որակի բարելավմանը՝ նվազեցնելով օդն աղտոտող այնպիսի նյութերի արտազատումը, ինչպիսիք են ծծմբի երկօքսիդը (SO_2), ազոտի օքսիդները (NOx) և մասնիկավոր նյութերը:
Էներգետիկ անկախություն	Ավելի բարձր	Ագրովոլտային կամ տանիքի արևային կայաններում արևային էներգիայի արտադրությունը նպաստում է էներգետիկ անկախությանը և նվազեցնում կախվածությունը կենտրոնացված էլեկտրացանցերից: Սա կարող է մեծացնել էներգետիկ անվտանգությունը և դիմակայունությունը:

Բ. Փոքրամասշտաբ արևային ՖՎ հզորություն ունեցող արևային կայանների տեղադրման ենթածրագրի մեղմող միջոցառումները

22. Թե՛ ագրովոլտային, և թե՛ տանիքի արևային կայանների շինարարական փուլի ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները մեղմելու համար կարևոր է հետևել կայուն շինարարության սկզբունքներին: Մատակարարներից կպահանջվի իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Բոլոր սարքավորումները պետք է ապահովված լինեն ձայնախլացուցիչներով և աղմուկը նվազեցնող սարքերով:
- Պատրաստել տեղամասի նախաաշխատանքային ֆոտո-փաստաթղթավորում: Մատակարարը պետք է գրանցի ամսաթիվը, գտնվելու վայրը և շրջակա տարածքի նկարագրությունը: Մատակարարը պետք է պահպանի լուսանկարները մինչև պայմանագրի ավարտը:
- Տեղական լեզվով պատրաստված բրոշյուրների, գրքույկների կամ ցանկացած տեղեկատվական նյութի միջոցով շրջակա տարածքների մարդկանց տեղեկացրնել կատարվելիք աշխատանքների, մեկնարկի գնահատված ժամանակահատվածի, ավարտման գնահատված ժամկետի և կոնտակտային անձի մասին:
- Ապահովել, որպեսզի աղմուկ առաջացնող սարքերը գործարկվեն, իսկ աշխատանքներն իրականացվեն միայն ցերեկային ժամերին:
- Նախքան իրական աշխատանքները՝ աշխատանքային տարածքում տեղադրել ցուցանակներ/նախազգուշական նշաններ: Դրանք կարող են լինել լուսանդրադարձիչ կոների կամ նախազգուշացնող եռանկյանաձև նշանների տեսքով: Ապահովել պատշաճ ցանկապատում և պաշտպանիչ պատնեշներ բոլոր շինհրապարակների շուրջբոլորը:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

- Շինարարության/տեղադրման ընթացքում հանրային կարգի խանգարման ռիսկը (ինչպիսիք են՝ աղմուկը, փոշին և ազդեցությունները երթևեկության հոսքերի վրա), ինչն առաջացնում է ժամանակավոր խաթարում տեղական համայնքի և այցելուների համար:
- Թափոնների պատշաճ կառավարում և շինանյութերի վերամշակում:
- Էներգաարդյունավետ շինարարական սարքերի և գործելակերպերի օգտագործում:
- Տանիքների արևային կայանների տեղադրման աշխատանքներում ապահովել տանիքների պատշաճ հերմետացում և անջրանցիկություն:
- Համապատասխանություն շինարարական գործունեության հետ կապված տեղական կանոնակարգերին և թույլտվություններին:
- Եթե աշխատանքները չեն ավարտվելու ցերեկային ժամերին և անհրաժեշտ կլինի դրանք մի քանի օրով երկարաձգել, ապա ապահովել, որպեսզի բոլոր տեղամասերում տեղակայվեն գիշերային պահակներ:
- Խստորեն հետևել աշխատողներին և հասարակական անվտանգությանը վերաբերող Հայաստանի Հանրապետության կառավարության ուղեցույցներին:
- Աշխատողներին պատշաճորեն տեղեկացնել առողջությանը և անվտանգությանը սպառնացող ռիսկերի մասին, և, բացի այդ, տանիքի ՖՎ-ի տեղադրման գործում ներգրավվելու են միայն արհեստավարժ աշխատողներ: Նախքան աշխատանքը սկսելը փորձարկել կառուցվածքների ամբողջականությունը: Խստորեն իրականացնել անկումից պաշտպանության ծրագիր, որը ներառում է մագլցման տեխնիկայի ուսուցում և անկումից պաշտպանության միջոցների կիրառում, անկումից պաշտպանության սարքավորումների ստուգում, սպասարկում և փոխարինում, անկման մեջ հայտնված աշխատողների փրկում: Խստորեն կիրառել աշտարակի կառույցին համապատասխան 100% անկումից պաշտպանությունը, և անհրաժեշտ տեղաշարժերը, ներառյալ՝ վերելքը, վայրէջքը և մի կետից մյուսը տեղաշարժվելը: Այնուամենայնիվ, ծրագրում չեն ներգրավվի չլիցենզավորված ընկերություններ:
- Որոշում առ այն, թե արդյոք տեղամասում առկա են անհատական պաշտպանական միջոցների (ԱՊՄ) համապատասխան պաշարներ:
- Աշխատողներին տրամադրել երկտոնային նեյլոնից կամ համարժեք ամրության նյութից պատրաստված 16 միլիմետրից (5/8 դյույմ) ոչ պակաս լայնության անվտանգության գոտիներ, և անմիջապես փոխարինել դրանք՝ մանրաթելերի մաշման կամ քայքայման նշաններ երևան տալու դեպքում:
- Աշխատանքները սկսելուց առաջ հեռացնել նշանները և այլ խոչընդոտները ձողերից կամ կառույցներից:
- ԾԻԽ-ին և ծրագրի իրականացման խորհրդատուին 24 ժամվա ընթացքում զեկուցել ցանկացած շինարարական պատահարի կամ նախավթարային իրավիճակ մասին: ԾԻԽ-ին և ԱԶԲ-ին 24 ժամվա ընթացքում զեկուցել աշխատողների կամ բնակիչների հոսպիտալացման կամ մահվան հետ կապված լուրջ վթարների մասին:
- Ապահովել, որպեսզի բոլոր խաթարված տեղամասերը, աշխատանքային տարածքները կամ գույքերը վերականգնվեն և բերվեն նախքան աշխատանքները եղած վիճակներին:
- Աշխատանքներից հետո անմիջապես հեռացնել բոլոր ավելորդ նյութերն ու թափոնները: Ապահովել, որպեսզի այն նյութերը, որոնք կարող են կրկին օգտագործվել կամ վերամշակվել, տեղադրվեն հատկացված պահեստային տարածքում և պատշաճ կերպով հաշվառվեն: Թափոնանյութերը տեղադրել հեռացման համար հատկացված վայրում: Չպետք է թողնել շինարարության հետ կապված որևէ նյութ կամ թափոն:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

- Պատրաստել հետաշխատանքային ֆոտո-փաստաթղթավորում և պահպանել լուսանկարները մինչև պայմանագրի ավարտը:
- ԾԻԽ-ին ներկայացնել աշխատանքների ավարտի մասին հաշվետվություն և հաստատել, որ յուրաքանչյուր աշխատանքային տարածք մաքրվել և/կամ վերականգնվել է:

Գ. Գյուղատնտեսական ենթածրագրից ակնկալվող բնապահպանական ազդեցությունները և ռիսկերը

23. Այս ծրագիրը նախատեսում է օգտագործել տարբեր գյուղատնտեսական սարքավորումներ և միջոցառումներ՝ բիզնեսի եկամուտները խթանելու, աշխատատեղերի հնարավորություններ ստեղծելու, տնային տնտեսությունների եկամուտներն ավելացնելու և պարենային անվտանգությունը բարելավելու նպատակով: Ավելին, ծրագրի համար պահանջվում է նվազագույն շահագործում և սպասարկում: Սարքավորումների և գործողությունների ցանկը ներառում է.

- Մոտավորապես 100-500 քառակուսի մետր հողատարածքի կաթիլային ոռոգման համակարգ (ներառյալ՝ ջրի բաքը և խողովակները)
- Մրգի չորանոց/ջրազրկիչ սարք
- Սածիլներ
- Ձողեր և
- Հակակարկտային ցանցեր՝ ձողերերով
- Սննդի վերամշակման սարք
- Փաթեթավորման սարք
- Սննդամթերքի տեսակավորման սարք
- Գործիքներ և այլ գյուղատնտեսական սարքեր
- Սառցարաններ
- Սերմեր
- Մինչև 150 քառակուսի մետր հողատարածքի վրա ջերմոց

Բացի այդ, հետևյալ գործողությունների իրականացման արդյունքում կարող են ստացվել եկամուտներ.

ա) Սննդամթերքի վերամշակում
բ) Թխում
գ) Տեսակավորում
դ) Հովացում
ե) Սառեցում
զ) Արևային կայան
է) Ջերմային պոմպ
ը) Ջրատաքացուցիչ
թ) Հակակարկտային ցանց՝ ձողերով
ժ) և ավելին:

24. Այստեղ ներկայացվում են որոշ հնարավոր բնապահպանական ազդեցություններ, որոնք ակնկալվում են, որ կլինեն փոքր և տեղակայված սահմանափակ հողատարածքներում, և որոնք պետք է հաշվի առնել մոտ 100-500 քմ հողատարածքների

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

կաթիլային ոռոգման համակարգի տեղադրման աշխատանքների շինարարության փուլում և ներառել Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Ակնկալվող բնապահպանական ազդեցություններ

Հնարավոր ազդեցություն	Ռիսկ	Ծանոթագրություն
Հնարավոր ազդեցություններ շինարարության փուլում		
Հողի պաշտպանություն	Ցածր	Մատակարարին կհաջողվի նվազագույնի հասցնել հողերի խախտումը ձեռքով փորելու կամ փոքրածավալ սարքավորումներ օգտագործելու միջոցով: Հողի կառուցվածքը վերականգնելու համար օգտագործել հողի համապատասխան բարելավիչներ և հետլցումներ:
Էլեկտրաէներգիայի օգտագործում. կարող է լինել էլեկտրաէներգիայի կարիք՝ տեղադրման ժամանակ սարքերի գործարկման համար:	Ցածր	Մատակարարից կպահանջվի կառավարել էներգաարդյունավետ սարքերի օգտագործումը և դիտարկել փոքր այգիների համար ձեռքով տեղադրումը՝ էլեկտրաէներգիայի սպառումը նվազեցնելու նպատակով:
Ջրի օգտագործում. Ջուր կարող է պահանջվել համակարգի փորձարկման և հոսքի արագությունը կարգավորելու համար:	Ցածր	Մատակարարից կպահանջվի համակարգի տեղակայման ընթացքում կառավարել և իրականացնել ջրարդյունավետ գործելակերպեր:
Բնադրավայրերի խաթարում. Շինարարական աշխատանքները կարող են խաթարել այգում եղած տեղական բուսական և կենդանական աշխարհը:	Շատ ցածր	ԾԻԽ-ից կպահանջվի իրականացնել առաջարկվող ենթածրագրերի տեսողական ստուգում նախքան տեղադրումը՝ գոյություն ունեցող բնադրավայրերի վրա ազդեցությունից խուսափելու նպատակով: Արդեն իսկ մշակված հողատարածքի 100-500 քառակուսի մետր մակերեսի կաթիլային ոռոգման համակարգի տեղադրումը, ընդհանուր առմամբ, ունենում է փոքր հետք, և այնքան էլ հավանական չէ, որ այն կհանգեցնի բնադրավայրերի կորստի կամ զգալի վտանգ կներկայացնի բուսական ու կենդանական աշխարհի համար: Մատակարարը հնարավորինս կխուսափի առկա բուսականությունը խաթարելուց:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

Թափոնների առաջացում	Ցածր	Մատակարարը պատասխանատու կլինի տեղադրման ընթացքում առաջացած թափոնների, ներառյալ՝ փաթեթավորման և այլ աղբի կառավարման համար: Այս նյութերի պատշաճ հեռացումը և վերամշակումը չափազանց կարևոր են բնապահպանական վնասը կանխելու համար:
Շինարարական աշխատանքներից առաջացող աղմուկի աղտոտվածություն, որը կարող է խանգարել սոցիալական օբյեկտներին և/կամ մոտակա համայնքներին:	Շատ ցածր	Տեղադրման համար կպահանջվի ապամոնտաժման և փոխարինման շատ կարճ ժամանակահատված: Սա ցածր աղմուկ առաջացնող գործողություն է:
Կուտակված շինանյութեր	Ցածր	Մատակարարի համար կպահանջվի փոքր տարածք սարքավորումների տեղադրման և տրանսպորտային միջոցների մուտքի/ելքի համար:
Աշխատանքային առողջության և անվտանգության ռիսկեր բանվոր-շինարարների համար:	Ցածր	Մատակարարի պայմանագիրը կներառի առողջության և անվտանգության համար պահանջվող միջոցառումներ:
Համայնքի առողջության և անվտանգության վրա ազդեցություններ:	Անհավանական	Ոռոգման համակարգի տեղադրման ժամանակ մատակարարը թույլ չի տա, որպեսզի լիազորություն չունեցող անձնակազմ հայտնվի աշխատանքների իրականացման վայրի մերձակայքում:
Ակնկալվում է, որ ծրագրի իրականացման ընթացքում կառաջանան որոշակի թափոններ, այդ թվում՝ շինարարական թափոններ, ներառյալ՝ պլաստիկի օգտագործումը, փաթեթավորման նյութերը, պլաստիկ խողովակները, կցամասերը և այլ բաղադրիչներ:	Ցածր	Մատակարարը պատասխանատու է լինելու ծրագրի իրականացման ընթացքում թափոնների կառավարման համար: Մատակարարներից կպահանջվի ԾԻԽ-ի և տեղական կառավարման մարմինների հետ համակարգել թափոնների պահման և հեռացման տարածքների հարցը:
Աշխատուժ	Ցածր	Մատակարարից կպահանջվի ապահովել աշխատողների, և

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

		հատկապես՝ մինչև 16 տարեկանների զբաղվածությանը վերաբերող ՀՀ աշխատանքային օրենսդրության և կանոնակարգերի խստիվ կատարումը: Սա ներառում է նվազագույն տարիքային պահանջների, աշխատանքային ժամերի և անվտանգության կանոնների պահպանումը:
Հնարավոր ազդեցություն շահագործման փուլում		
Ջրարդյունավետություն	Դրական	Կաթիլային ոռոգման համակարգերը նախագծված են ջուրը անմիջապես բույսերի արմատային գոտի հասցնելու համար, նվազագույնի հասցնելով ջրի վատնումը՝ գոլորշիացման, արտահոսքի և ավելորդ ցողման հետևանքով: Սա հանգեցնում է ջրի զգալի խնայողության՝ ավանդական ոռոգման մեթոդների համեմատ, այն դարձնելով էկոլոգիապես մաքուր և ծախսարդյունավետ տարբերակ:
Մշակաբույսերի բարելավված բերքատվություն	Դրական	Կաթիլային ոռոգումն ապահովում է բույսերին՝ ջրի և սննդանյութերի հետևողական և վերահսկվող մատակարարում: Սա կարող է հանգեցնել մշակաբույսերի բերքատվության և որակի բարելավմանը, քանի որ բույսերը ստանում են օպտիմալ աճի համար իրենց անհրաժեշտ ճիշտ քանակությամբ խոնավություն և սննդանյութեր: Այն կարող է նաև օգնել նվազեցնել ջրի սթրեսի ռիսկը, որը կարող է բացասաբար ազդել բերքատվության վրա:
Մոլախոտի աճի նվազեցում	Դրական	Կաթիլային համակարգերը ջուր են մատակարարում միայն բույսի արմատների շուրջբոլորը գտնվող տարածքներին՝ նվազեցնելով շարքերի միջև մոլախոտերի համար հասանելի խոնավությունը: Սա կարող է օգնել մոլախոտերի աճը ճնշելու հարցում և նվազագույնի հասցնել ձեռքով մոլախոտերի հեռացման կամ հերբիցիդների անհրաժեշտությունը, ինչը հանգեցնում է աշխատուժի և ծախսերի խնայողությանը:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

Նվազագույնի հասցված հողի էրոզիա	Դրական	Ջուրն անմիջապես արմատային գոտի ապահովելու միջոցով կաթիլային ոռոգումը նվազեցնում է հողի մակերեսին հարվածող ջրի ուժը, ինչը կարող է օգնել հողի էրոզիայի կանխմանը: Սա հատկապես կարևոր է էրոզիայի հակվածություն ունեցող տարածքներում, քանի որ օգնում է պահպանել հողի որակը և կանխել նստվածքների արտահոսքը դեպի մոտակա ջրային մարմիններ:

25. Այստեղ ներկայացվում են որոշ հնարավոր բնապահպանական ազդեցություններ, որոնք ակնկալվում է, որ կլինեն փոքր և կգտնվեն սահմանափակ հողատարածքների վրա, և որոնք պետք է հաշվի առնվեն մինչև 150 քառակուսի մետր հողատարածքներով ջերմոցների շինարարության փուլում, ներառյալ՝ Աղյուսակ 4-ում նշված ազդեցությունները:

Աղյուսակ 4. Ակնկալվող բնապահպանական ազդեցություններ

Հնարավոր ազդեցություն	**Ռիսկ**	**Ծանոթագրություն**
Հնարավոր ազդեցություններ շինարարության փուլում		
Հողի պաշտպանություն	Ցածր	Մատակարարին կհաջողվի նվազագույնի հասցնել հողերի խախտումը՝ ձեռքով փորելու կամ փոքրածավալ սարքավորումներ օգտագործելու միջոցով: Հողի կառուցվածքը վերականգնելու համար օգտագործել հողի համապատասխան բարելավիչներ և հետլցումներ:
Էլեկտրաէներգիայի օգտագործում	Ցածր	Մատակարարից կպահանջվի կառավարել էներգաարդյունավետ սարքերի օգտագործումը և դիտարկել փոքր այգիների դեպքում ձեռքով տեղադրումը՝ էլեկտրաէներգիայի սպառումը նվազեցնելու նպատակով:
Ջրի օգտագործում	Ցածր	Մատակարարից կպահանջվի ծրագրի իրականացման ընթացքում կառավարել և իրականացնել ջրարդյունավետ օգտագործումը:
Բնադրավայրերի խաթարում. Շինարարական աշխատանքները կարող են այգում խաթարել տեղական բուսական և կենդանական աշխարհը:	Ցածր Low	Մատակարարից կպահանջվի իրականացնել տեսողական ստուգումներ նախքան տեղադրումը՝ տնային տնտեսության այգու տարածքում գոյություն ունեցող բնադրավայրերի վրա ազդեցությունից խուսափելու նպատակով: Այգու՝ մինչև

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

		150 քառակուսի մետր հողատարածքների ջերմոցների շինարարությունը, ընդհանուր առմամբ, ունենում է փոքր հետք և այնքան էլ հավանական չէ, որ կհանգեցնի բնադրավայրերի կորստի: Հնարավորինս խուսափել առկա բուսականությունը խաթարելուց:
Թափոնների առաջացում	Ցածր	Մատակարարը պատասխանատու կլինի տեղադրման ընթացքում առաջացած թափոնների, ներառյալ՝ փաթեթավորման և աղբի կառավարման համար, այդ նյութերի պատշաճ հեռացման և վերամշակման միջոցով՝ տնային տնտեսության ջերմոցի պարագայում բնապահպանական վնասը կանխելու նպատակով:
Աղմուկի աղտոտվածություն	Շատ ցածր	Տեղադրման աշխատանքները առաջացնում են փոքր աղմուկ:
Կուտակված շինանյութեր	Ցածր	Մատակարարի համար կպահանջվի փոքր տարածք սարքավորումների տեղադրման և տրանսպորտային միջոցների մուտքի/ելքի համար:
Աշխատանքային առողջության և անվտանգության ռիսկեր բանվոր-շինարարների համար:	Ցածր	Մատակարարի պայմանագիրը կներառի առողջության և անվտանգության համար պահանջվող միջոցառումներ:
Համայնքի առողջության և անվտանգության մասով ազդեցություններ	Անհավանական	Մատակարարը թույլ չի տա, որպեսզի լիազորություն չունեցող անձնակազմ հայտնվի աշխատանքների իրականացման վայրի մերձակայքում:
Աշխատուժ	Ցածր	Մատակարարից կպահանջվի ապահովել աշխատողների, և հատկապես մինչև 16 տարեկանների զբաղվածությանը վերաբերող ՀՀ աշխատանքային օրենսդրության և կանոնակարգերի խստիվ կատարում: Սա ներառում է նվազագույն տարիքային պահանջների, աշխատանքային ժամերի և անվտանգության կանոնների պահպանում:
Հնարավոր ազդեցություն շահագործման փուլում		
Ջրարդյունավետություն	Դրական	Նախագծի համաձայն՝ ջրային ռեսուրսների պահպանման,

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

		թափոնների նվազեցման և ջրի զգալի խնայողության հասնելու համար ջրի խնայողության գործելակերպերի իրականացում՝ ավանդական ոռոգման մեթոդների համեմատ: Այս մոտեցումը էկոլոգիապես մաքուր է և ծախսարդյունավետ:
Մշակաբույսերի բարելավված բերքատվություն	Դրական	Օպտիմալացնել բույսերի առողջությունը, լուսավորությունը և ջերմաստիճանը՝ մշակաբույսերի ավելի լավ բերքատվության և որակի համար:
Մոլախոտի աճի նվազեցում	Դրական	Նվազեցնել մոլախոտերի աճը ջերմոցի ներսում՝ նվազագույնի հասցնելով ձեռքով մոլախոտերի հեռացման կամ հերբիցիդների անհրաժեշտությունը: Այս մոտեցումը հանգեցնում է աշխատուժի և ծախսերի խնայողության:
Նվազագույնի հասցված հողի էրոզիա	Դրական	Անմիջապես դեպի արմատային գոտի ուղղված վերահսկվող ջրարբիացումն օգնում է կանխել հողի էրոզիան: Սա հատկապես կարևոր է էրոզիայի հակվածություն ունեցող տարածքներում՝ պահպանելով հողի որակը և կանխելով նստվածքների արտահոսքը դեպի մոտակա ջրային մարմիններ:

Դ. Գյուղատնտեսական ենթածրագրի մեղմման միջոցառումները

26. Մատակարարից պահանջվելու է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Բոլոր սարքավորումները պետք է ապահովված լինեն ձայնախլացուցիչներով և աղմուկը նվազեցնող սարքերով, եթե կա դրա կարիքը:
- Պատրաստել տեղամասի նախաաշխատանքային ֆոտո-փաստաթղթավորումը: Մատակարարը պետք է գրանցի ամսաթիվը, գտնվելու վայրը և շրջակա տարածքի նկարագրությունը: Մատակարարը պետք է պահպանի լուսանկարները մինչև պայմանագրի ավարտը:
- Ապահովել, որպեսզի աղմուկ առաջացնող սարքերը գործարկվեն, իսկ աշխատանքներն իրականացվեն միայն ցերեկային ժամերին:
- Ապահովել պատշաճ ցանկապատում և պաշտպանիչ պատնեշներ բոլոր շինհրապարակների շուրջբոլորը:
- Եթե աշխատանքները չեն ավարտվելու ցերեկային ժամերին և անհրաժեշտ կլինի դրանք մի քանի օրով երկարաձգել, ապա ապահովել, որպեսզի բոլոր տեղամասերում տեղակայվեն գիշերային պահակներ:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

- Խստորեն հետևել աշխատողներին և հասարակական անվտանգությանը վերաբերող Հայաստանի Հանրապետության կառավարության ուղեցույցներին:
- Աշխատողներին պատշաճորեն տեղեկացնել առողջությանը և անվտանգությանը սպառնացող ռիսկերի մասին: Նախքան աշխատանքը սկսելը փորձարկել կառուցվածքների ամբողջականությունը: Խստորեն իրականացնել անկումից պաշտպանության ծրագիր, որը ներառում է մագլցման տեխնիկայի ուսուցում և անկումից պաշտպանության միջոցների կիրառում, անկումից պաշտպանության սարքավորումների ստուգում, սպասարկում և փոխարինում, անկման մեջ հայտնված աշխատողների փրկում: Խստորեն կիրառել աշտարակի կառույցին համապատասխան 100% անկումից պաշտպանությունը, և անհրաժեշտ տեղաշարժերը, ներառյալ՝ վերելքը, վայրէջքը և մի կետից մյուսը տեղաշարժվելը:
- Որոշում առ այն, թե արդյոք տեղամասում առկա են անհատական պաշտպանական միջոցների (ԱՊՄ) համապատասխան պաշարներ, և պահանջվող ԱՊՄ-ների համար մատակարարման ուղիների վերհանում:
- ԾԻԽ-ին և ծրագրի իրականացման խորհրդատուին 24 ժամվա ընթացքում զեկուցել ցանկացած շինարարական պատահարի կամ նախավթարային իրավիճակ մասին: ԾԻԽ -ին և ԱՁԲ-ին 24 ժամվա ընթացքում զեկուցել աշխատողների կամ բնակիչների հոսպիտալացման կամ մահվան հետ կապված լուրջ վթարների մասին:
- Ապահովել, որպեսզի բոլոր խաթարված տեղամասերը, աշխատանքային տարածքները կամ գույքերը վերականգնվեն և բերվեն նախքան աշխատանքները եղած վիճակներին:
- Աշխատանքներից հետո անմիջապես հեռացնել բոլոր ավելորդ նյութերն ու թափոնները: Ապահովել, որպեսզի այն նյութերը, որոնք կարող են կրկին օգտագործվել կամ վերամշակվել, տեղադրվեն հատկացված պահեստային տարածքում և պատշաճ կերպով հաշվառվեն: Թափոնանյութերը տեղադրել հեռացման համար հատկացված վայրում: Չպետք է թողնել շինարարության հետ կապված որևէ նյութ կամ թափոն:
- Պատրաստել հետաշխատանքային ֆոտո-փաստաթղթավորում և պահպանել լուսանկարները մինչև պայմանագրի ավարտը:
- ԾԻԽ-ին ներկայացնել աշխատանքների ավարտի մասին հաշվետվություն և հաստատել, որ յուրաքանչյուր աշխատանքային տարածք մաքրվել և/կամ վերականգնվել է:

Ե. Փոքր մասշտաբի արևային ՖՎ հզորությամբ արևային կայանների տեղադրմանը և գյուղատնտեսությանը վերաբերող ապագա ենթածրագրերի ընտրություն

27. Փոքրածավալ արևային ՖՎ հզորությամբ արևային կայանների տեղադրման և գյուղատնտեսության մասով ապագա ենթածրագրերի ընտրությունը պետք է կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցություններից խուսափելու համար:

28. ԾԻԽ-ի բնապահպանության ոլորտի մասնագետը բնապահպանական պլանավորման գործընթացի սկզբում դասակարգելու է յուրաքանչյուր հնարավոր ենթածրագիր՝ հիմնվելով Բնապահպանական արագ գնահատման (ԲԱԳ) ստուգաթերթերի վրա (ՀԱՎԵԼՎԱԾ 1), որպեսզի հաստատի, որ ընտրված ենթածրագրերը պատկանում են Գ կատեգորիային (շրջակա միջավայր):

29. Ապագա ենթածրագրերը նման կլինեն այն նմուշային ենթածրագրերին, որոնք վերանայվել են, և, ուստի, ակնկալվում է, որ կլինեն Գ կատեգորիայի: Այն ենթածրագրերը,

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱՁԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱՁԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

որոնք կանխատեսվում են որպես Ա կամ Բ կատեգորիայի ենթածրագրեր, չեն դիտարկվի ծրագրի շրջանակներում իրականացման համար:

IV. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

30. ԱԶԲ-ի ուղեցույցների և քաղաքականությունների խնդիրների լուծման գործառույթով ոգեշնչված՝ Բողոքների բավարարման մեխանիզմը (ԲԲՄ) մշակվել է ծրագրի իրականացման ընթացքում ազդեցության ենթակա անձանց հետ շարունակաբար հաղորդակցվելու նպատակով, որպեսզի Ծրագրի բնապահպանական կատարողականի վերաբերյալ նրանց մտահոգությունները, բողոքները և առաջարկությունները ստացվեն և հասցեագրվեն: ԲԲՄ-ը նախագծվել է, որպեսզի Ծրագիրն իրականացնող կողմերը կարողանան հասցեագրել բարձրացված խնդիրները՝ պահպանելով հիմնական սկզբունքները, ինչպիսիք են.

- արագորեն, ժամանակին և արդյունավետորեն հասցեագրել ազդեցության ենթակա մարդկանց մտահոգությունները և բողոքները
- օգտագործելով պարզ ընթացակարգ և թափանցիկ գործընթաց
- որը հեշտությամբ հասանելի կլինի ազդեցության ենթակա մարդկանց բոլոր հատվածներին անվճար և առանց հատուցման:

31. Գրանցված բողոքի հասցեագրման գործընթացում հնարավոր ներգրավվող կողմերն են. ԱԵԱ-ները, Մատակարարը, ԾԻԽ-ը, ԿՄ-ն և Դատարանը և/կամ ԱԶԲ-ն: Բողոքները բավարարելու համար նախատեսված մեխանիզմը պետք է մանրամասնորեն ներկայացվի հանրությանը: Ազդեցության ենթակա անձինք պատշաճ կերպով տեղեկացվում են այդ մեխանիզմի մասին հանրային լսումների և մասնակցության ընթացքում: Նույնը կարվի նաև հետագա հանրային լսումների ժամանակ: Բացի այդ, ԲԲՄ-ի առկայության և այն քայլերի մասին տեղեկատվությունը, որոնք ԱԵԱ-ն կարող է ձեռնարկել՝ առաջարկություններ կամ բողոքներ բարձրացնելու համար, պետք է հրապարակվեն համայնքային լսումների ընթացքում, նախքան համայնքներում որևէ գործունեություն իրականացնելը: Առաջարկություններ կամ բողոքներ ներկայացնելու քայլերի մասին մանրամասները կարող են տեղադրվել նաև էկոնոմիկայի նախարարության կայքում:

32. Մրցույթի հաղթող Մատակարարը պատասխանատվություն է կրում ԲԲՄ-ի պահանջն ընդունելու համար և տեղադրում է Ծրագրի տեղեկատվական վահանակ՝ համապատասխան տեղեկատվությամբ այն մասին, թե ինչպես է այն կիրառվելու շինհրապարակներում:

33. Ծրագրին, բնապահպանական մտահոգություններին և այլ խնդիրներին առնչվող հարցերի վերաբերյալ բողոք ներկայացնելու ընթացակարգային քայլերը հետևյալն են.

Նախքան շինարարության փուլը

Քայլ 1. Ծրագրից տուժած անձն իր առաջարկությունները/մտահոգությունները/բողոքները առաջին հերթին բարձրացնում է ԾԻԽ-ի մոտ: ԾԻԽ-ը ստանում և լուծում է բողոքը/պատասխանում է բողոքին: Եթե ԱԵԱ-ն բավարարված չէ պատասխանով կամ եթե ԾԻԽ-ի պատասխանատու անձնակազմին անհրաժեշտ է

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

լրացուցիչ կարողություն՝ ԱԵԱ-ների բողոքները հասցեագրելու համար, ապա կարող է ձևավորվել Բողոքների վերանայման խումբ (ԲՎԽ)՝ գործի օրինականությունը, համապարփակ, արդարացի և թափանցիկ քննարկումը ապահովելու նպատակով: ԲՎԽ-ի կազմը պետք է հակակշռված լինի և ներառի անկախ դիտորդի՝ բողոքների վերանայման գործընթացի անաչառությունն ու թափանցիկությունը ապահովելու նպատակով: Առաջարկվում է ԲՎԽ-ի հետևյալ կազմը.

ա. ԾԻԽ-ի ներկայացուցիչ՝ Նախագահ
բ. Անվտանգության մեխանիզմների թիմի (ԾԻԽ) ներկայացուցիչ՝ Անդամ
գ.Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչ, ըստ ընդունված կարգի - Անդամ
դ. Հավաստագրում ունեցող տեխնիկական փորձագետ, ըստ ընդունված կարգի - Անդամ
ե. Ծրագրի ղեկավարի/մատակարարի ներկայացուցիչ, ըստ ընդունված կարգի - Անդամ
զ. ԱԵԱ-ների ներկայացուցիչ՝ Անդամ
է. Անկախ կողմ (օրինակ՝ ՀԿ)՝ Դիտորդ

34. Եթե ԱԵԱ-ն բավարարված չէ ԾԻԽ-ի որոշումով, նույնիսկ ԲՎԽ-ի կողմից բողոքը վերանայելուց հետո, ապա նա կարող է բողոքը ներկայացնել ԷՆ: ԷՆ-ն հետևում է Պետական կառավարմանը վերաբերող ՀՀ օրենքին՝ գործի գրանցման, վերանայման և դրան լուծում տալու համար:

Շինարարության փուլ

Քայլ 2. Ծրագրից ազդեցության ենթարկված անձը կարող է իր առաջարկները/մտահոգությունները/բողոքները նախ և առաջ բարձրացնել Մատակարարի հատուկ լիազորված բողոքարկման անձնակազմի մոտ (շինարարության ավագ, ծրագրի ղեկավար, սոցիալական կամ բնապահպանական ոլորտի մասնագետ), այսինքն՝ փորձ է արվում ժամանակին և արագ լուծում տալ բողոքներին տեղական մակարդակում: Մատակարարի կողմից հաստատված մեխանիզմը կկազմի Ծրագրի ԲԲՄ-ի անբաժանելի մասը.
ա. Մատակարարն ապահովում է կոնտակտային տվյալների տրամադրումը (դաշտային գրասենյակի գտնվելու վայրը, աշխատանքային ժամերը, պատասխանատու կոնտակտային անձանց անունները, հեռախոսահամարները, փոստի և էլեկտրոնային փոստի գործող հասցեները և այլն) պաստառների և Ծրագրի տեղեկատվական վահանակների միջոցով:
բ. ԱԵԱ-ները կարող են տեղամասում դիմել Մատակարարի ներկայացուցչին և/կամ գրանցել առաջարկը/բողոքը բողոքների գրանցամատյանում, որը վարվում է Մատակարարի կողմից շինարարության տարածքում կամ մոտակայքում գտնվող դաշտային գրասենյակում: Բողոքների գրանցման ձևանմուշը՝ դիմումի բովանդակության և ձևաչափի հետ միասին, պատկերվում է Մատակարարի գրանցամատյանում և պետք է համաձայնեցվի ԾԻԽ-ի հետ:
գ. Մատակարարն անմիջապես հասցեագրում է բողոքը, ձեռնարկում է համապատասխան մեղմող միջոցներ խնդիրը ողջամիտ ժամկետում լուծելու համար և 15 օրվա ընթացքում ԱԵԱ-ին տրամադրում է գրավոր պատասխան՝ պատճենն ուղարկելով ԾԻԽ-ին: Գրանցված բողոքների/առաջարկների վերաբերյալ ներկայացված տվյալները Մատակարարի կողմից տրամադրվում են իր ամսական հաշվետվությունում, որն ամեն ամիս թարմացվում է՝ բողոքի կարգավիճակն արտացոլելու նպատակով:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

35. Եթե ԱԵԱ-ին չի բավարարում Մատակարարի կողմից իր բողոքի լուծումը, ապա կան դիմելու հետագա հնարավորություններ: ԱԵԱ-ն կարող է սրել խնդիրը՝ Մատակարարից պատասխան ստանալուց կամ չստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում բողոքը ներկայացնելով Ծրագրի ղեկավարին կամ ԾԻԽ-ին: Ստացված առաջարկությունները կամ բողոքները դասակարգվում են ըստ բնապահպանական և սոցիալական/տարաբնակեցման խնդիրների: Շրջակա միջավայրի անվտանգության մեխանիզմներին առնչվող բողոքները հասցեագրվում են ԾԻԽ-ի շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի մասնագետների կողմից: ԾԻԽ-ը պատասխանատու է 15 օրվա ընթացքում բողոքին պատասխանելու համար:

Քայլ 3. Եթե Ծրագրի ղեկավարի պատասխանը չի հասցեագրում բողոքը ի բավարարումն ԱԵԱ-ի, ապա ԱԵԱ-ն հնարավորություն ունի Է՛լ ավելի սրելու խնդիրը: Նա կարող են դիմել ԾԻԽ-ին, ԷՆ-ին և ԱԶԲ-ի Հաշվետվողականության մեխանիզմին (ՀՄ): Շինարարության փուլում ԾԻԽ-ի մակարդակով բողոքների քննության գործընթացը իրականացվում է նույն ընթացակարգով, ինչ-ով նախքան շինարարության փուլը:

Այս սուբյեկտների համար բոլոր համապատասխան կոնտակտային տվյալները Մատակարարի կողմից պետք է հասանելի դարձվեն պաստառների և Ծրագրի տեղեկատվական վահանակի միջոցով: Նշված փուլում Մատակարարը ծառայում է որպես շփման սկզբնական կետ, և ԱԵԱ-ին տրամադրում է անհրաժեշտ բացատրություններ ու օգնություն՝ նշված սուբյեկտներին դիմելու հարցում: Սա կարող է ներառել ԱԵԱ-ի հետ անձնական կապի դյուրացումը, եթե կա դրա անհրաժեշտությունը:

36. Վերջապես, ԱԵԱ-ն պահպանում է դատական կարգով՝ իրավական միջոցներով բավարարում հայցելու հնարավորությունը: Այնուամենայնիվ, ամեն ջանք գործադրվելու է սկզբնապես Մատակարարի և ԾԻԽ-ի մակարդակներում խնդիրները լուծելու համար: Եթե հնարավոր չէ լուծում գտնել այս մակարդակներում, ապա փորձեր կարվեն մտահոգությունները ԷՆ-ի մակարդակում հասցեագրելու համար, որպեսզի նվազագույնի հասցվի դատական գործընթացի անհրաժեշտությունը:

37. Այն դեպքում, երբ ԲԲՄ-ում առկա բոլոր ուղիները սպառելուց հետո ԱԵԱ-ն մնում է դժգոհ, ապա նա հնարավորություն ունի իր բողոքը ներկայացնել ԱԶԲ-ին: Կարևոր է նշել, որ բոլոր բողոքները, անկախ դրանց վերջնարդյունքներից և լուծումներից, մանրակրկիտ ձևով փաստաթղթավորվում են և հասանելի դարձվում վերանայման, մոնիթորինգի և գնահատման նպատակով:

38. ԲԲՄ-ին բողոք ներկայացնող անձը ցանկացած պահի կարող է ինքնուրույն դիմել դատարան:

V. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ

39. 2023 թվականի սեպտեմբերի 11-ին և 15-ին երկու հանրային լսումներ են անցկացվել համապատասխանաբար՝ Բաղանիս և Զույգաղբյուր համայնքներում: Լսումներն անցկացվել են ազդեցության ենթակա համայնքների ղեկավարների, վարչական համայնքների ղեկավարի տեղակալների, համայնքների անդամների և Ծրագրի շահառուների մասնակցությամբ՝ համաձայն ԱԶԲ ԱՄՔՓ-ի (2009 թվական) և Հայաստանի

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

օրենսդրության[1]: Ընդհանուր առմամբ հանրային լսումներին մասնակցել են 19 մասնակիցներ 2 համայնքներից: 19 մասնակիցներից 8-ը տղամարդ են, 11-ը՝ կանայք:

40. Լսումների ընթացքում մասնակիցներին տրվել է համապարփակ տեղեկատվություն ծրագրի տարբեր ասպեկտների վերաբերյալ՝ ներառյալ դրա նախապատմությունը, նպատակները, իրականացման փուլերը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը, Ծրագրի Բողոքների բավարարման մեխանիզմի (ԲԲՄ) կառուցվածքը և հատուկ նախատեսված կապուղին, որի միջոցով նրանք կարող են հասանելի դարձնել Ծրագրի ԲԲՄ-ն և կապի մեջ մտնել դրա հետ:

41. Համայնքների ղեկավարները առանձնահատուկ հետաքրքրություն են ցուցաբերել այն գյուղատնտեսական ծրագրերի տեսակները հասկանալու հարցում, որոնք կարող են ֆինանսավորվել արևային կայաններից ստացվող եկամուտներով: Նրանք նաև հետաքրքրվել են Ծրագրի շրջանակներում հակակարկտային կայանների տեղադրման հնարավորության մասին: Համայնքների առօրյա կյանքի վրա ազդող տարբեր մարտահրավերների քննարկման ընթացքում այս համայնքների ղեկավարներն ընդգծել են նաև իրենց գյուղատնտեսական ապրանքների շուկայավարման և շուկա արտահանման հետ կապված խնդիրները:

Մյուս կողմից՝ Ծրագրի շահառուներին հիմնականում մտահոգել է Ծրագրի շրջանակներում կոնկրետ իրենց մարզի համար տրամադրվելիք սածիլների համապատասխանությունը: Նրանք հետամուտ էին ծրագրի շրջանակներում իրենց ներդրումների և դերերի վերաբերյալ պարզաբանումներին: Հանրային լսումների ընթացքում «Հարցերի և պատասխանների ամփոփագիրը» ներկայացված է Հավելված 5-ում:

42. Ապագա ենթածրագրերի համար ԾԻԽ-ը կապահովի, որպեսզի ազդեցության ենթակա անձանց հետ անցկացվեն բովանդակալից լսումներ, իսկ նրանց մտահոգությունները արձանագրվեն: Իմաստալից լսումները ենթադրում են ծրագրի նախապատրաստման սկզբում իրականացվող խորհրդատվական գործընթաց, Ծրագրի տեղեկատվության ժամանակին հրապարակում, խորհրդատվություն՝ հարկադրանքից կամ ահաբեկումից զերծ միջավայրում, պարզաբանում, թե արդյո՞ք այն գենդերային առումով ներառական է և արձագանքող, մարդկանց համապատասխան տեսակետների ներառում Ծրագրի նախագծման գործընթացում և մեղմման միջոցառումներում:

43. ԾԻԽ-ը կդյուրացնի այս առումով բոլոր շահակիրների և տեղական համայնքների մասնակցությունը ծրագրի պարբերաշրջանի բոլոր փուլերում. լսումները պետք է անցկացվեն ծրագրի մարզերում՝ ծրագրի վերաբերյալ շահակիրների կարծիքը ստանալու և ծրագրի գործողությունների շուրջ համաձայնություն ձեռք բերելու նպատակով:

---

[1] Հանրային լսումներն իրականացվել են՝ բավարարելով ԱՁԲ ԱՄՔՓ-ի պահանջները և Հայաստանի օրենսդրության պահանջները, մասնավորապես՝ ՇՄԱԳ մասին օրենքի 6-րդ գլուխը և Քաղաքաշինության մասին օրենքի (1998 թվական) 6-րդ գլուխը և 6-րդ հոդվածը, ինչպես նաև՝ ՀՀ կառավարության 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-110-Ն որոշումը:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱՁԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱՁԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

VI. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԴԵՐԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

44. **Կատարող և իրականացնող մարմիններ.** ԷՆ-ը հանդիսանում է կատարող և իրականացնող մարմին. այն կհավաքագրի խորհրդատուների, այդ թվում՝ ԾԻԽ-ի ծրագրի ղեկավարին, ով պատասխանատու կլինի ծրագրի ընդհանուր իրականացման համար, իսկ շրջակա միջավայրի մասնագետը կներգրավվի Շինարարական պրակտիկայի կանոնագրքի (ՇՊԿ) և շրջակա միջավայրի պաշտպանության պահանջների իրականացմանն աջակցելու գործում: ԾԻԽ-ը պատասխանատու է գնումների և ակտիվների կառավարման, մոնիթորինգի և գնահատման համար: ԾԻԽ-ը կվերանայի բոլոր լրացուցիչ ենթածրագրերի վայրերը՝ շրջակա միջավայրի վրա հավանական բացասական ազդեցություն ունեցողները բացառելու նպատակով: Բացի այդ, ԾԻԽ-ը պատասխանատու կլինի ապագա հանրային լսումների և ԲԲՄ-ի համար: ԾԻԽ-ը կապահովի, որպեսզի պայմանագրային փաստաթղթերը ներառեն սույն ՇՊԿ-ը և կմշտադիտարկի Մատակարարի կողմից ՇՊԿ-ի իրականացումը:

45. Մատակարարներ. Մատակարարից պահանջվում է իրականացնել սույն ՇՊԿ-ը, և նա պատասխանատու կլինի ԾԻԽ-ին իրականացման հաշվետվություններ տրամադրելու համար: Մատակարարը նշանակում է շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության հարցերով ղեկավարի, ով ամենօրյա կտրվածքով պատասխանատու կլինի հետևյալի համար.

(i) ՇՊԿ-ի իրականացման ապահովում,
(ii) համակարգում շրջակա միջավայրի և անվտանգության մեխանիզմների մասնագետների հետ,
(iii) դաշտային մակարդակում բողոքների բավարարում, և
(iv) հաշվետվություն:

46. Սույն ՇՊԿ-ի՝ տեղական լեզվով թարգմանված օրինակը կտրամադրվի Մատակարարներին՝ աշխատողներին բացատրելու համար, և կպահվի տեղամասում շինարարության ընթացքում: ՇՊԿ-ով սահմանված պայմաններին չհամապատասխանելը կամ դրանցից որևէ շեղում համարվում է համապատասխանության խախտում, և դրա համար կպահանջվեն ուղղիչ գործողություններ:

47. Մատակարարից պահանջվում է ձեռնարկել հետևյալ միջոցները՝ շրջակա միջավայրի, աշխատողների և համայնքների առողջության ու անվտանգության վրա հնարավոր ազդեցություններն ու ռիսկերը հասցեագրելու համար.

- մեղմման միջոցառումների խստիվ իրականացում:
- շրջակա միջավայրի առողջության և անվտանգության հարցերով ղեկավարը պարտավոր է պահպանել բոլոր աշխատողների գրանցամատյանը, ներառյալ՝ տեղամասում գտնվող բոլոր ներկաների կոնտակտային տվյալները, նույնականացման քարտի համարը, հեռախոսահամարը և հասցեները՝ հետագա փուլում կոնտակտային տվյալների հետամտման կամ հետագծման պահանջի դեպքերի համար:
- մշակել աշխատակիցների ցուցակը՝ ամեն օր տեղամասում մարդկանց թիվը նվազեցնելու համար:
- ի լրումն շինարարության ոլորտի աշխատողների և այլ անձնակազմի համար միջազգայնորեն ճանաչված անվտանգության բոլոր այլ նախազգուշական միջոցների,

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

Մատակարարը պետք է յուրաքանչյուր աշխատողի տրամադրի անհատական պաշտպանական միջոցներ, և բոլոր աշխատողները պետք է դրանք կրեն: Անհատական պաշտպանական միջոցները պետք է փոխարինվեն կեղտոտվելու դեպքում և ժամանակ, կամ այլ կերպ հեռացվեն:

- աշխատողների համար ապահովել անվտանգ տրանսպորտային միջոցներ, որոնք չպետք է լինեն մարդաշատ և պետք է ունենան սոցիալական հեռավորություն նստեցումից մինչև իջեցում ողջ գործընթացում:
- կապ հաստատել մոտակա առողջապահական հաստատության հետ՝ արտակարգ իրավիճակների դեպքում աշխատողների արագ տեղափոխման պայմանավորվածություններով:

VII. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

48. ԾԻԽ-ը ԱԶԲ-ին կներկայացնի եռամսյակային հաշվետվություններ ՇՊԿ-ի իրականացման վերաբերյալ՝ որպես ծրագրի ընթացքի վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունների մաս, և շրջակա միջավայրի մոնիթորինգի կիսամյակային հաշվետվություններ, որոնք կվերանայվեն և կհրապարակվեն ԱԶԲ-ի կայքում: Անվտանգության մեխանիզմների իրականացման կարգավիճակի, խնդիրների և ուղղիչ գործողությունների, այդ թվում՝ հարակից ծախսերի և ժամանակացույցի մասին պետք է հստակորեն զեկուցել ԱԶԲ-ին: Անվտանգության մեխանիզմների իրականացման կարգավիճակը կքննարկվի նաև ԱԶԲ-ի յուրաքանչյուր վերանայման առաքելությունում, որտեղ հարցերն ու համաձայնեցված գործողությունները կարձանագրվեն հուշաթերթում:

49. Հնարավոր ազդեցությունները կարող են մեղմվել՝ դրանք հասցնելով մինչև ստանդարտ մակարդակների, ՇՊԿ-ով նախատեսվող պատշաճ ճարտարագիտական նախագծման և առաջարկվող մեղմման միջոցառումների ներառման միջոցով: Շատ դեպքերում, մեղմման միջոցառումները կարող են նախագծվել ոչ բարդ միջոցներով, որ սովորաբար օգտագործվում են շինհրապարակներում և հայտնի են շինարարական աշխատանքներ մատակարարողներին:

VIII. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Եզրակացություններ

50. Ծրագրի հետ կապված հնարավոր ազդեցությունների և ռիսկերի մանրակրկիտ վերլուծությունից հետո արվել է եզրակացություն, որ շրջակա միջավայրի վրա անդառնալի անբարենպաստ ազդեցություններ չեն լինի: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը համարվում է նվազագույն, և ակնկալվում է, որ այն տեղի կունենա միայն տեղադրման ժամանակ: Կանխատեսվում է, որ ծրագրի արդյունքում կառաջանան թափոններ, ինչպիսիք են՝ փաթեթավորումը, տանիքի հին նյութերը և այլ աղբ: Այս նյութերի պատշաճ հեռացումը և վերամշակումը չափազանց կարևոր է շրջակա միջավայրին պատճառվող վնասը կանխելու համար: Բացի այդ, անհրաժեշտ է ապահովել, որպեսզի ծրագրի աշխատանքների ընթացքում աշխատողներին տրամադրվի առողջության և անվտանգության պատշաճ պաշտպանություն:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

51. Հնարավոր ազդեցություններից կարելի է խուսափել պատշաճ պլանավորման և Մատակարարներին տրվող հրահանգների միջոցով: Հատուկ մեղմման միջոցառումներ են նախատեսվել ՇՊԿ-ում, և Մատակարարներից կպահանջվի պատրաստել նախաաշխատանքային և հետաշխատանքային ֆոտո-փաստաթղթավորում և ԾԻԽ-ին զեկուցել ՇՊԿ-ի իրականացման, պատահարների/միջադեպերի և այլ տեղեկությունների մասին, որ կարող են պահանջվել՝ ի հաստատումն նրա, որ նախագծի արդյունքում չեն առաջանում ազդեցություններ շրջակա միջավայրի, աշխատողների և հարակից համայնքների առողջության և անվտանգության վրա:

Բ. Առաջարկություններ

52. Ստորև ներկայացվում են ծրագրի համար կիրառելի առաջարկությունները՝ ոչ մեծ ազդեցություններ ապահովելու համար.

- Մատակարարներին տրամադրել ճանաչողական տեղեկություններ ԱԶԲ-ի ԱՄՔՓ-ի պահանջների և ՇՊԿ-ի վերաբերյալ:
- Տրամադրել սույն ՇՊԿ-ի օրինակը (անգլերեն և թարգմանված տեղական լեզվով) և բացատրել աշխատողներին:
- Շինարարության ընթացքում ՇՊԿ-ը (անգլերեն և թարգմանված տարբերակները) պահել տեղամասում:
- Տեղեկացնել Մատակարարներին, որ ՇՊԿ-ով սահմանված պայմաններին չհամապատասխանելը կամ դրանցից որևէ շեղում իրենից ներկայացնում է անհամապատասխանություն և պահանջում է ուղղիչ գործողություններ:
- Ձեռք բերել օրենքով սահմանված բոլոր թույլտվությունները հնարավորինս շուտ և ապահովել, որպեսզի պայմանները/դրույթները ներառված լինեն մանրամասն նախագծում:
- Մատակարարներից պահանջել, որպեսզի խստորեն իրականացնեն մեղմման միջոցառումները և կատարեն առողջության ու անվտանգության մասով պահանջները:
- Ապահովել, որպեսզի Մատակարարներն աշխատանքի վերցնեն շրջակա միջավայրի առողջության և անվտանգության ոլորտի որակավորված/հավաստագրված կառավարիչների, ովքեր պատասխանատու կլինեն մոնիթորինգի, հաշվառման, հաշվետվության և ուղղիչ գործողությունների պատրաստման համար:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՐԱԳ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ԲԱԳ) ՍՏՈՒԳԱԹԵՐԹԵՐ

Բնապահպանական արագ գնահատման (ԲԱԳ) ստուգաթերթեր արևային կայանների համար

Երկիր/Ծրագրի Անվանում.	Հայաստան. Կլիմային ադապտացվող սննդի անվտանգության ընդլայնման ծրագիր
Ներդրման անվանում.	Բարգավաճ և դիմակայուն Ասիայի և Խաղաղ օվկիանոսի Ճապոնիայի հիմնադրամի (JFPR) առանձին դրամաշնորհ
Ոլորտի բաժին.	**Արյային կայաններ**
Ամսաթիվ.	2023 թվականի օգոստոս

Ֆիլտրող հարցեր	**Այո**	**Ոչ**	**Ծանոթագրություն**
Ա. ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԴՅՈ՞Ք ԾՐԱԳՐԻ ՏԱՐԱԾՔԸ ՍԱՀՄԱՆԱԿՎԻՑ Է ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՌՈՒՄՈՎ ԶԳԱՅՈՒՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿԻՆ, ԿԱՄ ԳՏՆՎՈՒՄ Է ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ:			
▪ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՏԵՂԱՄԱՍ			
▪ ԳՏՆՎՈՒՄ Է ՕՐԵՆՔՈՎ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՄ ԴՐԱ ՄՈՏ			
▪ ԳՏՆՎՈՒՄ Է ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԲՆԱԴՐԱՎԱՅՐԵՐՈՒՄ (ՓՈՓՈԽՎԱԾ ԿԱՄ ԲՆԱԿԱՆ ԲՆԱԴՐԱՎԱՅՐԵՐ) ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄՈՏ			
▪ ԽՈՆԱՎ ՏԱՐԱԾՔ			
▪ ՄԱՆԳՐՈՎՆԵՐ			
▪ ԷՍՏՈՒԱՐՆԵՐ			
▪ ԱՆԴՐԱՓՆՅԱ ՇՐՋԱՆ/ՕՖՇՈՐ (ԾՈՎԱՅԻՆ)			
Բ. ՀՆԱՐԱՎՈՐ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԴՅՈ՞Ք ԾՐԱԳԻՐԸ ԿԴԱՌՆԱ ՊԱՏՃԱՌ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՀԱՄԱՐ...			
▪ հողի լայնածավալ խանգարում և հողօգտագործման վրա ազդեցություններ՝ հատկապես բերքատու հողերի շրջանցման պատճառով:			

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

Ֆիլտրող հարցեր	Այո	Ոչ	Ծանոթագրություն
▪ մարդկանց հարկադիր տարաբնակեցում. (ֆիզիկական տեղահանում և/կամ տնտեսական տեղահանում)			
▪ անհամաչափ ազդեցություններ աղքատների, կանանց և երեխաների, բնիկ ժողովուրդների կամ այլ խոցելի խմբերի վրա:			
▪ շինարարական աշխատանքներից եկող աղմուկ, վիբրացիա և փոշի:			
▪ շինարարության ընթացքում տեղական երթևեկության ավելացում:			
▪ շրջակա միջավայրի խաթարումներ, ինչպիսիք են՝ հողի էրոզիան, հողի աղտոտումը, ջրերի որակի վատթարացումը, օդի աղտոտվածությունը, աղմուկը և վիբրացիան շինարարության փուլում:			
• Էսթետիկ դեգրադացիա և գույքի արժեքի կորուստ՝ կայանի և օժանդակ շինությունների ստեղծման հետևանքով:			
▪ մակերևութային ջրերից կամ ստորգետնյա ջրհորներից ջրառի հոսքի ռեժիմների փոփոխություններ՝ հովացման նպատակով արտուղման արդյունքում:			
▪ ջրային մարմինների և ջրային էկոհամակարգի աղտոտում՝ կեղտաջրերի մաքրման կայանից, հովացման աշտարակներից և շահագործման ընթացքում ողողումից:			
▪ թռչունների կամ չղջիկների կյանքին սպառնացող վտանգ՝ ծրագրի օբյեկտների հետ բախման և/կամ կենտրոնացված արևային ճառագայթներից այրվելու արդյունքում:			
▪ արդյունաբերական հեղուկներ (դիէլեկտրիկ հեղուկներ, մաքրող ազդանյութեր և լուծիչներ) և պինդ թափոններ (քսայուղեր, կոմպրեսորային յուղեր և հիդրավլիկ հեղուկներ), որոնք առաջանում են շինարարության և շահագործման ընթացքում և որոնք հավանականորեն աղտոտում են հողը և ջրային ռեսուրսները:			
▪ հողի/ջրի աղտոտում՝ տեղադրման, շահագործման և շահագործումից հանելու ժամանակ վտանգավոր նյութերի օգտագործման կամ կոտրված կամ վնասված արևային մարտկոցների (ֆոտովոլտային տեխնոլոգիաները պարունակում են փոքր քանակությամբ կադմիում, սելեն և արսեն) հեռացման հետևանքով:			
▪ աղմուկի խանգարում շահագործման ընթացքում՝ պայմանավորված բնակավայրերին մոտ լինելով կամ այլ առանձնահատկություններով:			
▪ տեսողական ազդեցություններ՝ պայմանավորված արևային կոլեկտոր համակարգերով, որոնք առաջացնում են ցոլք կամ շլացում:			

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

Ֆիլտրող հարցեր	Այո	Ոչ	Ծանոթագրություն
▪ Ծրագրի շինարարության և շահագործման ընթացքում բնակչության մեծ հոսք, որն առաջացնում է ծանրաբեռնվածության աճ սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների (օրինակ՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր) վրա:			
▪ սոցիալական բախումներ տեղի բանվորների և այլ տեղերից եկածների միջև:			
▪ աշխատանքային առողջության և անվտանգության հետ կապված ռիսկեր ու խոցելիություն՝ պայմանավորված շինարարության, տեղադրման, շահագործման և շահագործումից հանելու ընթացքում ֆիզիկական, քիմիական, կենսաբանական և ճառագայթային վտանգներով:			
▪ վտանգներ համայնքի առողջության և անվտանգության համար՝ պայմանավորված շինարարության և շահագործման ընթացքում նյութերի և թափոնների, զորօրինակ՝ պայթուցիկների, վառելիքի և այլ քիմիական նյութերի տեղափոխմամբ, պահպանմամբ և օգտագործմամբ և/կամ հեռացմամբ:			
▪ համայնքի անվտանգության ռիսկեր, որոնք պայմանավորված են թե՛ պատահական, և թե՛ բնական պատճառներով, հատկապես այն դեպքում, երբ ծրագրի կառուցվածքային տարրերը կամ բաղադրիչները հասանելի են լինում ազդեցության ենթակա համայնքի անդամներին, կամ երբ դրանց անսարքությունը կարող է վնաս պատճառել համայնքին ծրագրի շինարարության, շահագործման և շահագործումից հանելու ընթացքում:			

Բնապահպանական արագ գնահատման (ԲԱԳ) ստուգաթերթեր գյուղատնտեսության համար

Երկիր/ Ծրագրի անվանում.	Հայաստան. Կլիմային ադապտացվող սննդի անվտանգության ընդլայնման ծրագիր
Ներդրման անվանում.	Բարգավաճ և դիմակայուն Ասիայի և Խաղաղ օվկիանոսի Ճապոնիայի հիմնադրամի (JFPR) առանձին դրամաշնորհ
Ոլորտի բաժին.	**Գյուղատնտեսություն**
Ամսաթիվ.	2023 թվականի օգոստոս

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

Ֆիլտրող հարցեր	Այո	Ոչ	Ծանոթագրություն
Ա. Ներդրումների համար տեղամասի ընտրություն **Արդյո՞ք ներդրումների տարածքը սահմանակից է բնապահպանական առումով զգայուն հետևյալ տարածքներից որևէ մեկին, կամ գտնվում է այդ տարածքում:**			
▪ **Պահպանվող տարածք**			
▪ **Խոնավ տարածք**			
▪ **Մանգրովներ**			
▪ **Էստուարներ**			
▪ **Պահպանվող տարածքի բուֆերային գոտի**			
▪ **Կենսաբազմազանության պաշտպանության հատուկ տարածք**			
Բ. Հնարավոր բնապահպանական ազդեցություններ **Արդյո՞ք ներդրումը կդառնա պատճառ հետևյալի համար...**			
▪ Թանկարժեք էկոլոգիական արժեքների կորուստ (օրինակ՝ անտառների/ճահիճների կամ պատմական/մշակութային շենքերի/տարածքների նկատմամբ ոտնձգության արդյունք, բնական ջրային ուղիների հիդրոլոգիայի խաթարում, տարածաշրջանային ջրհեղեղներ և դրենաժային վտանգներ):			
▪ Ջրամատակարարման իրավունքների հարցում բախումներ և դրա հետ կապված սոցիալական բախումներ:			
▪ Մարդկանց և կենդանիների տեղաշարժի խոչընդոտներ:			
▪ Հնարավոր էկոլոգիական խնդիրներ՝ պայմանավորված հողի էրոզիայի և տղմակալման աճով, ինչը հանգեցնում է հոսքի թողունակության նվազմանը:			
▪ Անբավարար ջրահեռացում, որը հանգեցնում է աղայնության ինտրուզիայի:			
▪ Ստորերկրյա ջրերի գերմղում, ինչը հանգեցնում է աղակալման և գրունտի նստեցման:			
▪ Ստորին հոսանքի ջրերի որակի վատթարացում և, հետևաբար, ստորին հոսանքի ջրերի շահավետ օգտագործման վատթարացում:			
▪ մարդկանց տեղահանում, կամ հարկադիր տարաբնակեցում			
▪ Անհամաչափ ազդեցություններ աղքատների, կանանց և երեխաների, բնիկ ժողովուրդների կամ այլ խոցելի խմբերի վրա:			

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

Ֆիլտրող հարցեր	Այո	Ոչ	Ծանոթագրություն
▪ Հողատիրության և հողօգտագործման խնդիրներից ծագող հնարավոր սոցիալական բախումներ:			
▪ Հողի էրոզիա նախքան ջրանցքների սեղմումը և երեսպատումը:			
▪ Աղմուկ շինարարական սարքավորումներից:			
▪ Փոշի շինարարության ընթացքում:			
▪ Ճահճացում և հողի աղակալում՝ ջրահեռացման և գյուղացիական տնտեսությունների անբավարար կառավարման արդյունքում:			
▪ Հողի սնուցիչների տարալվացում և հողի բնութագրերի փոփոխություն՝ պայմանավորված ոռոգման ջրերի չափից շատ կիրառումով:			
▪ Պիկ սեզոններին ստորին հոսանքի ջրամատակարարման նվազում:			
▪ Հողի աղտոտվածություն, գյուղացիական տնտեսությունների աղտոտված արտահոսք և ստորերկրյա ջրեր, և հանրային առողջության համար վտանգ՝ պայմանավորված պարարտանյութերի և թունաքիմիկատների չափից ավելի կիրառմամբ:			
▪ Հողի էրոզիա (ակոսային, մակերեսային):			
▪ Ջրանցքների ողողաքանդում:			
▪ Ջրանցքների խցանում նստվածքներով:			
▪ Ջրանցքների խցանում մոլախոտերով:			
▪ Ծովի ջրերի ներխուժում ստորին հոսանքի քաղցրահամ ջրային համակարգեր:			
▪ Ջրի միջոցով փոխանցվող կամ ջրի հետ կապված հիվանդություններով հիվանդացության աճ:			
▪ Վտանգներ անվտանգ և առողջ աշխատանքային միջավայրի համար՝ պայմանավորված շինարարության և շահագործման ընթացքում ֆիզիկական, քիմիական և կենսաբանական վտանգներով:			
▪ Ծրագրի շինարարության և շահագործման ընթացքում բնակչության մեծ հոսք, որն առաջացնում է ծանրաբեռնվածության աճ սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների (օրինակ՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի) վրա:			
▪ Սոցիալական բախումներ այլ մարզերից կամ երկրներից բանվորներ վարձելու դեպքում:			

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

Ֆիլտրող հարցեր	Այո	Ոչ	Ծանոթագրություն
▪ Ռիսկեր համայնքի առողջության և անվտանգության համար՝ պայմանավորված շինարարության և շահագործման ընթացքում նյութերի, մասնավորապես՝ պայթուցիկների, վառելիքի և այլ քիմիական նյութերի փոխադրմամբ, պահպանմամբ և օգտագործմամբ և/կամ հեռացմամբ:			
▪ Համայնքների անվտանգության ռիսկեր՝ կապված թե՛ պատահական, և թե՛ բնական վտանգների հետ, հատկապես այն դեպքերում, երբ ներդրման կառուցվածքային տարրերը կամ բաղադրիչները (օրինակ՝ ոռոգման ամբարտակները) հասանելի են լինում ազդեցության ենթակա համայնքի անդամներին, կամ երբ դրանց անսարքությունը կարող է վնաս պատճառել համայնքին շինարարության, շահագործման և շահագործումից հանելու ընթացքում:			

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ

Գծապատկեր 1. Տավուշի մարզի Բաղանիսի բնակավայր

Գծապատկեր 2. Շիրակի մարզի Զույգաղբյուրի բնակավայր



ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆՏՐՎԱԾ ՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Գծապատկեր 3. Տավուշի մարզի Բաղանիս համայնք (Դպրոցի շենքը)

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

Գծապատկեր 4. Շիրակի մարզի Զույգաղբյուր համայնք
(ֆուտբոլի դաշտին կից տարածքը)

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱԿԵՐԸ

Տավուշի մարզի Բաղանիս համայնքի՝ Ծրագրի շահառուների բակեր 1-ը և 2-ը

Շիրակի մարզի Զույգաղբյուր համայնքի՝ Ծրագրի շահառուների բակեր 1-ը և 2-ը

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Կլիմային ադապտացվող սննդի անվտանգության ընդլայնման Ծրագիր

Հանրային լսում

Վայրը՝ Թումանյանի անվան մշակութային կենտրոն

Ամսաթիվ՝ 11.09.2023

Climate-Adaptive Food Security Enhancement Program

Public consultation

Place: Tumanyan town, Noyemberyan, Lori

Date: 11.09.2023

List of participants/ Մասնակիցների ցանկ

No	Մասնակցի անուն, ազգանուն Name, surname of participant	Հեռախոս, էլ. հասցե Phone number, e-mail	Կարգավիճակ Status	Ստորագրություն Signature
1	Վահան Աղաջանյան	093700876 n.aghanyan@mail.ru	[illegible]	
2	Հրաչիկ Ղազարյան	0-94-93-05-99 nghushetyan@hotmail.com	[illegible]	
3	Գայանե Բայրամյան	093 10.25.01 120667@gmail.com	[illegible]	
4	Սոնա Թադևոսյան	sonabadasyan2019@mail.ru	[illegible]	
5	Լուսինե Հովսեփյան	091 42 90 62 vahan.oganesian@vstp.org	[illegible]	
6	Ցոլակ Վանուհյան	098 707-504 zolakzohrabyan@[illegible]	[illegible]	
7	Դավիթ Գրիգորյան	093520522	ԱՀՖ [illegible]	
8	Վալերիան Ռոստոմյան	077287120	ԱՀՖ [illegible]	
9	Արեգ[illegible] Սմբատյան	098271409	[illegible]	

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

No	Մասնակցի անուն, ազգանուն Name, surname of participant	Հեռախոս, էլ. հասցե Phone number, e-mail	Կարգավիճակ Status	Ստորագրություն Signature
10	[illegible]	077-63-52-72	[illegible]	[illegible]
11	[illegible]	093-35-44-04	[illegible]	[illegible]
12				
13				
14				
15				
16				
17				
18				
19				
20				

Կլիմային ադապտացվող սննդի անվտանգության ընդլայնման Ծրագիր

Climate-Adaptive Food Security Enhancement Program

Հանրային լսում

Public consultation

Վայրը՝ Երևանի Տարածքային կենտրոն h. Ջաղացաշեն Place: Shirak m. Ashotsk h. Ջաղացաշեն
Ամսաթիվ՝ 15.09.2023 Date: 15.09.2023

List of participants/ Մասնակիցների ցանկ

No	Մասնակցի անուն, ազգանուն Name, surname of participant	Հեռախոս, էլ. հասցե Phone number, e-mail	Կարգավիճակ Status	Ստորագրություն Signature
1	[illegible]	093 53 42 53	[illegible]	[illegible]
2	[illegible]	093 90 69 64	[illegible]	[illegible]
3	[illegible]	094 92-88-37	[illegible]	[illegible]
4	[illegible]	91-937410	[illegible]	[illegible]
5	[illegible]	077-69-68-64	[illegible]	[illegible]
6	[illegible]	077 297120	[illegible]	[illegible]
7				
8				
9				

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

Աղյուսակ 5. Հանրային լսումների ընթացքում հարցերի և պատասխանների ամփոփագիր

N	Հարցեր	Պատասխաններ
1.	**W.-** Արդյո՞ք արևային էներգակայանի տեղադրումը հանգեցնում է շրջակա միջավայրի վրա որևէ ազդեցության:	Արևային կայաններն ունենում են նվազագույն ազդեցություն շրջակա միջավայրի վրա, և իրականում դրանց շահագործումը նվազեցնում է ածխածնի երկօքսիդի (CO_2) արտանետումները:
2.	M.- Հնարավո՞ր է արդյոք փոխարինել համայնքապետարանի տանիքի նյութը, որն այժմ կազմված է ազբոշիֆերից:	Եթե կարող եք ավարտել տանիքի փոխարինումը երկամսյա ժամկետում, ապա մենք, անշուշտ, հնարավորություն կունենանք տեղադրել արևային համակարգ: Սակայն, կարևոր է նշել, որ դա կենթադրի ձեր մասով լրացուցիչ ծախսեր, որոնք Ծրագրի շրջանակներում չեն ծածկվում:
3.	**W.-** Արդյո՞ք հնարավոր է, որ մենք պայմանավորվածություն ձեռք բերենք մասնավոր կազմակերպության հետ՝ մասնավոր սեփականություն հանդիսացող շենքի տանիքում արևային էլեկտրակայան տեղադրելու համար:	Իդեալական տարբերակում բաժանորդը պետք է լինի այնպիսի կազմակերպություն, որը մտադիր է օգտագործել արևային էլեկտրակայանը, ինչն անհրաժեշտ է դարձնում համապատասխան պայմանագրի կնքումը էլեկտրացանցերի հետ: Այն դեպքերում, երբ տանիքը կամ տարածքը չի պատկանում համայնքին, այլ հանդիսանում է մասնավոր սեփականություն, ապա պահանջվում է թույլտվության ձեռքբերում, իսկ այդ գործընթացը կարող է ժամանակատար լինել: Մեկ այլ մարտահրավեր էլ առաջանում է այն առումով, որ մասնավոր գույքի սեփականատերը կարող է ցանկացած պահի պահանջել արևային կայանների հեռացումը տարածքից: Բացի այդ, հնարավոր է, որ մասնավոր գույքի սեփականատերը մահանա կամ տեղափոխվի երկրից դուրս:
4.	**M.-** Ո՞րն է արևային կայանների տեղադրման համար անհրաժեշտ մակերեսը՝ արտահայտված քառակուսի մետրերով:	Այն պահանջում է 160-ից մինչև 200 քառակուսի մետր մակերես, որը կարող է տատանվել՝ կախված տանիքի դիրքից. արդյոք այն ուղղված է ուղիղ դեպի հարավ, հարավ-արևմուտք, թե՞ հարավ-արևելք:
5.	**W.-** Որտե՞ղ պետք է տեղադրվեն արևային կայանները:	Ծրագրի ֆինանսավորումը պետք է հաստատվի երկամսյա ժամկետում: Այս հաստատումից հետո մենք պետք է սկսենք արևային կայանների տեղադրման գործընթացը, որն ակնկալվում է, որ կտևի մոտ 2-3 ամիս ավարտին հասցնելու համար:
6.	**W.-** Ո՞ր կազմակերպությունը կամ սուբյեկտն է պատասխանատու Ծրագրի իրականացման համար:	Ծրագրի իրականացումը կկատարվի էկոնոմիկայի նախարարության կողմից, իսկ տեխնիկական փորձաքննության գործընթացները կիրականացնի ՊՀԾ-ը:
7.	**M.-** Կարո՞ղ ենք էլեկտրաէներգիայից ստացված եկամուտներն օգտագործել հակակարկտային կայաններ տեղադրելու համար:	Իհարկե, դա հնարավոր է, քանի որ հակակարկտային կայանները նախագծված են գյուղատնտեսությանն օգուտ բերելու համար, իսկ այս Ծրագրի շրջանակներում գոյացած եկամուտները հատուկ նախատեսված են գյուղատնտեսության զարգացման համար:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

N	Հարցեր	Պատասխաններ
8.	**W.-** Ի՞նչ տեսակի գյուղատնտեսական նախաձեռնություններ կարող ենք ձեռնարկել:	Որպես օրինակ՝ հնարավոր ծրագրերից մեկը ներառում է համայնքի տարածքում ոռոգման համակարգերի բարելավումը կամ տեղադրումը: Մեկ այլ տարբերակ էլ համայնքում խելացի այգիների ծրագրի մշակումն է:
9.	**M.-** Եթե Բաղանիսում ներդնենք 25 միլիոն դրամի սուբսիդավորման ծրագիր, ապա կարող ենք դիտարկել մի սցենար, որտեղ, զորօրինակ, համայնքի մասնաբաժինը կազմում է 10 միլիոն դրամ: Այս համատեքստում կարևոր է գիտակցել, որ համայնքը նշանակալի ներդրում է ունեցել գյուղատնտեսության զարգացման գործում՝ արդյունավետորեն ներդնելով ֆինանսական միջոցները հաջորդ հինգ տարիների համար:	Պատկերացրեք հետևյալը. եթե նշենք, որ Բաղանիսի գյուղատնտեսության զարգացմանը պետք է հատկացվի տարեկան 2.5 միլիոնի ներդրում, իսկ դուք այդ 2.5 միլիոնն օգտագործեք սուբսիդավորման ծրագրերի միջոցով, ինչի արդյունքում կստացվի 5 միլիոնի ներդրում, ապա դա, անշուշտ, իրենից կներկայացնի ավելի զգալի ներդրում: Այնուամենայնիվ, կարևոր է ընդգծել, որ այդ ներդրումները պետք է ուղղված լինեն բացառապես գյուղատնտեսական ծրագրերին: Եթե սուբսիդավորման ծրագրերը չեն համապատասխանում գյուղատնտեսության զարգացմանը, ապա ներդրված գումարը դառնում է ավելի քիչ վերաբերելի: Ծրագրի ավարտից հետո հաջորդ 5 տարիների ընթացքում դուք կունենաք եկամուտը ձեր նախընտրած ցանկացած ծրագրին հատկացնելու ճկունություն:
10.	**W.-** Ինչպե՞ս է կառավարվելու արևային էներգակայանների պահպանումն ու սպասարկումը:	Արևային էլեկտրակայաններն այս առումով ինտրիգային են: Թեև, մասնավորապես 40 կՎտ հզորությամբ կայանի համար նախնական ներդրումները կարող են քիչ չլինել, սակայն հաշվարկը հետևյալն է. այս կայաններն աշխատում են անընդմեջ 25 տարի, որի ընթացքում դրանք պահպանում են 100% արտադրողականություն: 25 տարի անց նրանց արտադրողականությունը նվազում է մինչև 80%, ինչը դեռևս շարունակում է լինել բավականին զգալի: Բացի այդ, այս կայանների սպասարկման ծախսերը գրեթե չնչին են:
11.	**W.-** Արդյո՞ք թույլատրելի է, որպեսզի էլեկտրաէներգիայից գոյացած եկամուտները հատկացվեն արևային էլեկտրակայանի սպասարկման ծախսերը ծածկելու համար:	Իհարկե, դա մեր պլանի մի մասն է: Բացի այդ, մենք առաջարկում ենք 5 տարվա երաշխիքի հավաստիացում հակադարձիչների /ինվերտոր/ համար և 12 տարվա երաշխիք արևային կայանների համար:
12.	**W.-** Կարո՞ղ ենք ակնկալել, որ ձեր կողմից մատակարարվելիք սածիլները կտան բարձրորակ բերք:	Անշուշտ, սրանք հատուկ բարձր բերքատվություն տվող սորտեր են, որոնք կարող են ապահովել բերքահավաքի երկարաձգվող սեզոն: Այնուամենայնիվ, կարևոր է ընդգծել, որ դրանց խնամքն իրականացնելիս պետք է խստորեն պահպանել այն հրահանգները, որոնք մենք կտրամադրենք ձեզ:
13.	**M.-** Արդյո՞ք անհրաժեշտ է, որպեսզի այգում լինի միայն մեկ տեսակի բույս:	Ոչ, մենք ձեզ կտրամադրենք բազմաթիվ տարբեր սորտեր: Այգու մոտ 80%-ը կկազմեն ազնվամորին, իսկ մնացած մասը կներառի մոշ, հաղարջ և գոջի հատապտուղներ: Այնուամենայնիվ, դուք ունեք դրանք բազմապատկելու և ըստ ձեր նախասիրության դասավորելու ճկունություն:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում:

N	Հարցեր	Պատասխաններ
14.	**W.-** Արդյո՞ք մեզանից պահանջվում է ֆինանսական ներդրում խելացի այգիներ ստեղծելու համար:	Ոչ, միակ պահանջը ձեր ժամանակն է, մեր հրահանգներին խստորեն հետևելը և կաթիլային ոռոգման համակարգը շահագործելու համար օգտագործվող էլեկտրաէներգիայի դիմաց վճարումը:
15.	**M.-** Արդյո՞ք հակակարկտային ցանցերը կկազմեն այս սխեմայի մաս:	Ներկայումս հակակարկտային ցանցերը Ծրագրում ներառված չեն, սակայն մենք կառաջարկենք, որպեսզի այս գաղափարը քննարկվի:
16.	**M.-** Արդյո՞ք այն մշակաբույսերի տեսակները, որոնք դուք պարտավոր եք մատակարարել, պիտանի կլինեն մեր մարզում մշակման համար:	Անշուշտ, մենք նմանատիպ ծրագրեր իրականացրել ենք ձեր մարզում և հարևան համայնքներում, և դրանք տվել են խիստ դրական արդյունքներ:
17.	**W.-** Արդյո՞ք այս մշակաբույսերը նախատեսված են ջերմոցային պայմաններում մշակման համար:	Ոչ, այս մշակաբույսերը նախատեսված չեն ջերմոցային մշակության համար. դրանք հարմար են բակային պայմանների համար:

ՆԵՐՔԻՆ օգտագործման համար. Սույն տեղեկատվությունը հասանելի է ԱԶԲ-ի ղեկավարությանը և անձնակազմին: Այն կարող է տրամադրվել ԱԶԲ-ից դուրս միայն համապատասխան թույլտվության դեպքում: